

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Բաղաձական, Գիտական

51^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 17

Գ. ՇՐՋԱՆ

27 ԱՊՐԵԼ 1902

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մասիս շաբաթաթերթի ծառեկան բաժանորդագրիցն է Կ. Պոլսոյ համար Բաւտման Կ. և գաւառներուն համար Յիսուս Կ. և, կանխիկ վճարելի: Արտատպան 12 ֆրանկ կամ 5 ռուպլի: Թղթատրական ծախք խոբագրութեան վրայ է: Վեցամեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին առկա աւելցող մէկէն: Մասիս հրապարակ կ'ընէ առկա առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է խոխոյն խնցնեն խոբագրութեան: Ժամանակ աւելցնելի վերջ աշխատեալ առարկութիւնները նկատուրեան չեն ստանուիր:

Ձի հրատարակաւմ ձեռագիրները եւ չեն դարձուիր:

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

Հարցէ

رعليه آغوب ماطيوسيان مطبعه سنده «ماسيس» غزتهسى ادار سنده

ԽԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ (ՄԱՍԻՍ) Ի

Տպարան Յ. Մատթէոսեան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Rédaction de la Revue MASSIS

Imprimerie H. Matteosian

CONSTANTINOPLE

**ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
ՏՈՔԹ. Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ**

ԲԵՐԱ, ՄԵԾ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 200

Կալաթա-Սերայի Լիսին դեմ

ԳԵ. ՆԵ. ՇԲ. օրերը առաւօտեան կանու-
լսեն մինչեւ իրիկուան ժ. 11¹/₂

ԲԵ. ԴԵ. ՈԼԲ. օրերը 6 ԿԵ մինչեւ 11¹/₂

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐ (Հետաքրքրաշարժ
Վեպ երեք հատորով) Թարգմ. Կ. Ս. Իիթի-ձեան,
Վաճառման կեդրոնատեղին է Պաղատեան Դրատունը,
կը գտնուի նաեւ ամէն հայ գրավաճառներու քով:

Գին 15 դրուշ:

9—10

**ՊՐՈԻՍԱՅԻ ԽԱՎԼՈՒՆԵՐԸ
ԳՈՐԾԱԾԵՑԵՐ**

ՊՐՈԻՍԱՅԻ ԽԱՎԼՈՒՆԵՐԸ Եւրոպական
ներքն աւելի ԴԻՄԱՑԿՈՒՆ ըլլալուն առ-
րակոյս չկայ, հետեւապէս աւելի ԱԺԱՅ
են:

Ս. ՄԱՐՏԻԿԵԱՆ ԵՒ ՈՐԴԻՈՑ

ՊՐՈԻՍԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒ
ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

լաւադոյնը ըլլալու համարը կը վայելեն
տարիէ ի վեր:

Դիւնը

206—29, ԵԿԵՐ Զարեք, Մահմուտ Փաւա, Կ. Պոլիս

ԻԻՆԻՕՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828—1829

ՀՐԴԵՀԻ ՃԻԻՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ վեճաք	240,000,000 ֆր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000 »
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000 »

ԿԵՆԱՑ ՃԻԻՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ վեճաք	99,000,000 ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնը	253,000,000 »
Դրամագլուխ եւ պահեստը	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ
«Իւնիօն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաւխաւորութիւն մը **ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ**
ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց զեղչեալ զինքով: Նպաստաւոր պայ-
մաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ որ եւ է ընկերութեան
պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիօնի
ապահովագրութեան ան պէտք է լինանք եւ յուսալաբար իւնենանք, որոնց կ'են-
թարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des
bénéfices) ՅՈՒՐԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովա-
գրուին:

Ընկերութեան գրաստանունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ
Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալաթա, Թահապուրուն խան, Օսմ. Պանֆային դիմացը
Դորձակալութիւնը Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

ՄԱՍԻՆ

51^{րդ} ՏԱՐԻ

— 27 ԱՊՐԻԼ 1902 —

ԹԻԻ 17

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գրականության ազդակները եւ գրականական ընդլզումներ (Բ. և վերջին յօդուած). ՄՈՒՇԵՂ, ՎԱՐԴԱՊԵՏ: — Մօրք վիճիք (Նորավայ) Վ.Ս.ՀԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ: — Շարքուան կեանքը. ՍԳԼԼԱ: — Սեւիան Ռականի դամբարանին առջեւ. ԴՈՒԿԱՍ ՎԱՐՊԵՏԵԱՆ: — Ռականի քեանակին. Գ. ՊՈՒՊԼԻ: — Բանաստեղծութիւններ. Սփինգս. Վ. ՄԱԼԷՅԵԱՆ. Սեւ բաղդ. ՎԱՐԴԱՎԷՍ: — Ներքնա (Գերմ. վեպ) ԲԱՌԻԼ ՀԱՅՁԷ: — Յուշաներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱԶԴԱԿՆԵՐԸ

ԵՒ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԸՆԴՎԶՈՒՄՆԵՐ

(Բ. և ՎԵՐՋԻՆ ԵՕԳՈՒՄԵ)

Մեր տոհմային գրականութեան եւ լեզուի զարգացումը երեւակայութեան չափ աւելի դանդաղօրէն կատարուած ըլլալուն, եւ մեր զուտ գրական աշտադրութիւններուն սեւերը անձուկ չըլնակ մը միայն կաղմկեալուն պատճառաւ, գծուարին պիտի ըլլար այս բարեւորութեան զանազան փուլերը պատկերացնել իրենց յետին դիմերուն մէջ: Գաղով մեր արդի լեզուին, ասիէ տակաւին դար մը առաջ աւելիա չէր թեւակոխած այժմու զուտ աշխարհաբարի կալուածը, ու իր վրայ կը կրէր ուսուցիչին մը եւ ազճատ գրարարի մը խառնուրդը: Սխալած չպիտի ըլլանք եթէ ըսենք, թէ մեր գրական լեզուն իր արդի զարգացման շրջանն ընդգրկեց այն օրէն ի վեր, երբ օրագրութիւնն ու պարբերական հանդէսներն եւ րեւոյան մեր մէջ:

Մեր մէջ օրագրութեան պատմութիւնը թէպէտ դարու մը մեր գրական կեանքը կը կաղմէ պատմականօրէն, բայց անիկա իր նախաքայլերուն չկրցաւ ոչ լեզուին բարեւորութեանը նպաստել եւ ո՛չ ալ լուրջ գա-

լափարի մը ծառայել: Նմանողութեան մը արդիւնքն էր անոր նորածագ գոյութիւնը, առանց միջավայրի ու դարաշրջանի նկարագրին սահանջումներէն մէկը կաղմած ըլլալուն: Այդ պատճառաւ նոյն այդ օրագրութիւնը ստատուուն, թեթեւ ձեռնարկի մը սողաւորութիւնը պիտի ընէ այսօր մեր վրայ: Այդ կէս դարու թարթափուն լրագրութեան պատմութեան վերջն է որ օրագրութիւնը պէտք մը կը դառնայ միջավայրին ու դարաշրջանին, եւ այդ առնէն է որ օրագրութիւնը ոչ միայն կը հայթայթէ առաջնորդող յօդուածներ, ու քաղաքական տեսութիւններու շարք մը, այլեւ միեւնոյն ժամանակ իր վրայ՝ աներեւոյթ ձեռքէ մղուած՝ ստիպողականութիւնը կը զգայ գրարարախառն ուսմիջօրէնը վերածելու այն աշխարհաբարին ուրիշ այժմունք ծնաւ:

Օրագրութիւնը այդ թուականներուն պատկառանք աղբոյ հրապոյր մը պիտի ունենար անշուշտ, ու անոնց խմբագիրները հեռուէն կ'երեւակայուէին աշխարհի վրայ իրենց մնա-

ցորդները գերբնական էակներու, որոնցմէ հասարակ մահկանացուները քաշուելու՝ ակնածելու ներքին մղում մը պիտի զգային իրենց մէջ, Գէթ այսպէս կը ցուցնեն այն զբոսաւորները որոնցմով աս ու ան հին դրողէաներ կը բանաձեւէին իրենց ապաւորութիւնները, զորս ունեցած էին ժամանակին լսուած խմբագրի մը հանդէպ։ Մեզի համար այդ հմայիչ կախարհանքը պիտի կրնայինք նոր սկանալութեան մը ապաւորութիւններուն վերագրել, եթէ երբեք նոյնը գոյութիւն չունենար նաեւ այն վեանին վրայ, ուր օրագրութիւնը քանի մը դար բոլորած էր արդէն։ Ռեճէ լը Ֆէվրը իր մէկ/վիպական դործին մէջ վաթսուհական թուականներուն էր որ կը գրէր. — «Լրագրապետութիւնը այնպիսի պաշտօն մըն է, որ հետեւէն չյարգուիր ամենեւին, բայց մօտէն չգիտեմ ինչո՞ւ ամենքս ալ քիչ մը անոր համը առնել կուզենք։ Խմբագիրները դերասաններուն հետ միեւնոյն ընտանիքէն են, կ'արհամարհենք զանոնք ու միեւնոյն ժամանակ կը նախանձինք իրենց։ Այս թափառաշրջիկները մտացի են եւ մարդ անոնց քսուած ատեն ինքզինքը օստիկ կը զգայ։ Չկայ զեղեցիկ կին մը որ մեծ պէտքներու մշտնաշարժ քօն չըլլայ։ Եւ շատ քիչեր կան որոնք պատեն ժամուն խմբագիրները չնոյնաբար ինքն ինքն համեստօրէն լրագրի շինողներու մէջ չսպրդին»։ Ահա այս եղած է գրեթէ ամէն երկրի մէջ այն ապաւորութիւնը զոր օրագրութիւնը թողած է ընթերցողներու մօքին վրայ։

Բայց չկայ ոչ մէկ երեւոյթ՝ մօքի ու լեզուի՝ որուն հետ մարդիկ ուշ կամ կանուխ չընտանենան։ Լեզուի ու գաղափարի դարգացման այդ ռաճվիրաներն ալ չուշացան սեպտեմբր պարզ մահկանացուներու դասակարգէն եւ օրագրութեան թերթը ալ ո'չ կախարչող պատգամախօսը մնաց մեզի համար եւ ո'չ դադանաւոր Սիրիլիան, այլ այն յըշկուած, կոկուած քուրճի կտորները, որոնք երկաթ գլաններու տակ ճնշուած, մեղի կը բերէին ուրիշներու գաղափարները, կարծիքները, եւ ժամանակակից անցքերու իրադարձութիւնները, ու շատ շատ՝ ասկէ դուրս՝ կամ հանելուկ մը եւ կամ զուեշտաւլէպ մը ու բարոյական գրուածք մը։

Օրագրութեան այդ բոլոր խառնափնդրութիւնները, սակայն, — ուր միեւնոյն թերթին մէջ իրարու հետ հիւսուած են մահուան մը ողբերգը, ամուսնութեան մը նուաղութիւնը, օճիւրի մը մանրամասնութիւնը, սնանկութեան մը սրտմաշութիւնը, — իրենց համար ունին ազդեցութիւն մը, որ թերեւս շատ վեր եղած ըլլայ մեր ըմբռնումէն։ Եւ այդ ազդեցութիւնը պիտի ներգործէ ո'չ միայն ընթերցողին գաղափարներու զարգացումին, այլ եւ նոյն իսկ անոր գրիտ միտումներուն վրայ։ Օրագրութիւնն ալ դրականութեան արդի ռամկայումը, որ մեր մամուլին մէջ, զուտ դրականութեան տեղը կը բռնէ, ունի իր նկարագիրը, անհատներու, ազգերու եւ դարաշրջաններու պէս։ Այլ նկարագիրը իր մասնայատկութիւնն է եղած ու պիտի մնայ մինչեւ որ ընթերցողները իրենց խտապահանջութեամբ հարկադրեն քանի եւ սրբազին այդ օրագրութեան այս կամ այն կոշտ դիմերը։

Օրագրութեան նկարագիրը երբեք նկատագրութեան չպիտի առնուէր գաղափարի ու խորհուրդի իր գործած ուղղութեանը մէջ։ Ասի մէկն է այն երեւոյթներէն, որոնք չեն կրնար ոչ մէկու մը կողմէ արացուիլ, եւ որոնք շատ անգամ կազմած են ու կը կազմեն այն ուղղութիւնները, որոնք օրագրութեան այս կամ այն վարիչներէն կը սկսին, նախ անհատաբար, եւ յետոյ զայն կը փոխանցեն թերթին, իրեւ անոր արածառարկութեանը։ Այս պատճառաւ է որ եւրոպական թերթեր՝ հակառակ իրենց վարկական փոփոխութիւններուն, բնաւ ինքզինքն զատապարտուած չեն զգար իրենցմէն թօթուելու այն աւանդական ճարտար, որ իրենց ուղղութիւնը կը դժէ։

Մեր միակ նպատակն է՝ այս վերջին տարիներու մէջ՝ օրագրութեան նկարագրի ազդեցութիւնը ցուցնել ընթերցողներու լեզուին եւ գրականութեան style-ին վրայ։ Նախապրտած օրագրութիւնը կամ հանդէս մը, ինչպէս նաեւ հեղինակ մը կամ յօդուածագիր մը, անանց իրենց ուղեւոր իրենց նկարագիրը պիտի փոխանցեն իրենց ընթերցողներուն։ Այդ նկարագրի փոխանցումը տեղի պիտի ունենայ

ՇԱՐԹՈՒԱՆ ԿԵԱՆՔԸ

— 00000 —

նոյն խոյն աննշանն անտուած զիծերուն մէջ ան-
գամ : Այդ հեղինակի ազգեցութիւնը պիտի
պարտաւորէ ընթերցողը , որ իր ոճը , լեզ-
ուական ձեւերը , ասացումքները , մէկ խոս-
քով , իր խօսելու եւ գրելու բոլոր ձեւերը
փոխ անուել իր նախաւորած հեղինակէն :
Նոյն բաները , սամկօրէնի կամ գրաւարի հո-
լովաններու նոյն վերջաւորութիւնները , գնա-
հատելու անհնոր՝ կամ շնորհալի նոյն պայմա-
նադրականութիւնը եւ ամէնը որոնք կրնան
ալբի զարնել թերթի մը վրայ , ու այդ բո-
լորը մարդկային ընկերական այս կամ այն
մասին ստացութիւնը պիտի դառնայ վերջա-
պէս : Ահա թէ ինչո՞ւ համար՝ հակառակ կող-
մէն յօդուածագիր մը կամ հեղինակ մը , չու-
զեր վերաբերութիւն ունենալ թերթի մը
հետ , որուն գրութեան ոճը , գաղափարի ար-
տայալութեան կերպերը կը զարաւելին իր
մտքի տարրէն : Բայց որովհետեւ այսօրինակ
հաստատութիւն մը (affirmation) կրնայ լուրջ
զիմացութեան մը հանդիպել , ուստի համոզ-
ուելու համար , թէ թերթերը ո՞րքան կրնան
ազդել իրենց նկարագրով՝ իրենց ընթերցող-
ներուն վրայ , եւ իրենց գրութեան ոճը վի-
կու առն անոնց , զիրենք է այս երեսօյլը
ալբի առջեւ ունենալ : Դիտեցէ՛ք զրազէտ
մը — յօդուածագիր զրազէտ մը մանաւանդ —
որ սովորութիւն ունի նիւթ պատարաստել քանի
մը թերթերու միանգամայն , որոնց գրութեան
կերպը , կամ ըսենք style կը տարբերին ի-
րարէն : Պիտի տեսնէ՛ք , թէ ժամանակ մը
վերջ այդ միւսնոյն հեղինակին մէջ ծնունդ
առած են տարբեր ոճեր , որոնց իւրաքան-
չիւրը իր կողմէ կը գործածուին՝ առանց իր
ուղեկուն՝ իրենց պատկանած թերթին համար ,
եւ այդ ոճի դանաղանախանութիւնը , միեւնոյն
գրազէտին մէջ , կրնայ այնքան յառաջանալ
չարեւակականութեամբ , մինչեւ որ նոյն այն
հեղինակը այլեւս չկրնայ ինքզինքը ճանչնալ
իր գրչին արտագրութիւններուն կամ ըսենք
ինքն իր լեզուին մէջ :

Ահա թէ ինչո՞ւ համար լրագրական հրա-
պարակին վրայ կրեցող յօդուածագիրներ ,
որագրութեան եւ հանդէսներու զանազան
մասնաճիւղերու մէջ գրած առնանին , իրենք
իրենց չեն նմանիր շատ անգամ , կաղապար-
ուած ըլլալով տարբեր օղիւններու գրական
մասնաւոր մէջ :

ՍՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ

Իր պատեղներէն կըած ծառի մը չափ բե-
ղուն անցաւ շարաթը , գրական , կրթական
եւ դեռ ինչական որ կ'ուզէք խնդիրներու յոր-
դող առատութիւնովը լեցուն : Ասիկա անոր
համար չէ՛ անշուշտ որ , բաղմակօղմանի կեր-
պով ապրուած աղուոր կեանք մը ունինք ,
հապա միմիայն անոր համար որ , ոչինչ բա-
ները շատ կը սիրեն մեզի զբաղեցնել , ու այդ
երանելի ապրանքներն են ընդհանրապէս որ ,
իրենց հետ կը բերեն կարգ մը թնճուկոտ հա-
շիւներ , որոնք կը բաւեն մեզի օրերով բերնի
ծառոց ըլլալու : Ասոր ասանկ ըլլալը ապա-
հովարար կը պարտինք մեր խելքի սուփին
կենդանարանական վերջին նորաձեւութեան
համեմատ շինուած ըլլալուն :

Թեթեւկոտ վարանքի մը մէջ , լեզուս վրայ
չերթար օրինակը վեր առնելու գրական այն
պայքարէն որ մղուեցաւ վերջին օրերս խըն-
դիրի մը շուրջը , առիթ տալով որ , հասնողը
բան մը ըսէ անոր մասին , իրեն խօսք ինչայ
կամ չինայ :

Գրական պայքարները , — որոնք առնն
առնն տեղի կ'ունենան մեր մէջ , — ես նման-
ցուցած եմ միշտ , տեսակ մը տարօրինակ փո-
խասացութեան , որոնք կը կանչուին հրապա-
րակին չորս ծայրէն , կանոնաւոր յաջորդա-
կանութիւնով , անխուսափելիօրէն , եւ օրի-
նակելի՝ ճշգրտահոլութեան մը տակ : Մեր մէջ
կարելի չէ , օրինակի համար , խօսքի մը ըն-
թացքին , թեթեւ ակնարկութիւն մը ընել
ու եւ մէկու մը մէկ խօսքին , տարակարծիք
գտնուած ըլլալու համար անոր մասին : Հոգ
չէ՛ թէ ակնարկութիւնը որքան թեթեւ ըլլայ ,
եւ խնդիրը վիճարանութեան բռնուելու հա-
մար չառ աննշան , չէ՛ , անխուսափելի փոխա-
սացութիւնը կը սկսի : Ակնարկութիւնը որո՞ւ
որ կ'ուզուի , փութալան անպարանքով մը ,
պատասխանը կը հասցնէ , ու առիկա բուա-
կան կ'ըլլայ որ , խնդիրը խոշորնայ : մեծ հա-
մեմատութիւններ ստանայ , իրեն հետ բերե-
լով յարակից ուրիշ պարագաներ , որոնք կա-
տարեալ բանալէնի մը հանգամանքը կու տան

գործին, ու ա'լ այն ատեն, պէտք է երեւակայել հետեւանքը: Ասոնք մեր ունայնաւոր բնաւորութեան միայն արուած յատկութիւններ են, որոնց օրինակը ուրիշ տեղ գտնել բաւական դժուար է:

Բայց վախովը թէ, դատադարտուած ունակութեան մը օրինակը կ'ըլլամ, այս բոլոր վերջուշումներով՝ անցած խնդիրի մը, շուտով կը խուսափիմ անկէ, անդրադառնալու համար բաւական եղական տարածայնութեան մը, որ արձադանդ դուռ այս միջոցիս, անգական մամուլին մէջ:

Եանքներուն անունը եւեր է: Մարդ չլիտեր թէ, անոնք ինչ յաջող մրցակիցներ ունին ասդին, որոնք քար կը հանեն իրենց ամէն մէկ տարօրինակութեան, սա պզտիկ տարբերութիւնով որ, մինչդեռ Նոր-Աշխարհի այդ դեղին մարդիկը կ'ընեն անանկ տարօրինակութիւններ՝ զորս ակամայ կը սիրես, որուն ակամայ կը հաւնիս, մեր մէջ ծնող տարօրինակութիւնները, ընդհակառակը, կ'ըլլան այն տեսակ բաներ, որոնք սիրուն նորութենէ մը գեղեցիկ մտածումէ մը աւելի . . . արատուցութեան կը մօտիկնան: Եւ մտածել որ, օտար թերթերը, իրենց «աստի-անտի»ները մենէ չեն ուղեր վնասել, հայերէն չգիտնալու դժբաղդութիւնը ունեցած ըլլալուն համար: Կակծալի՝ դժբաղդութիւն:

Շատ հետեւները երթալու պէտք չի կայ, անմիջապէս հանդիպելու համար այդ գողարիկ ապրանքներէն մէկուն: Պատմութիւնը շատ թաքմ է տակաւին, յանձին Աղթամարցի Արսէն վարդապետի մը, որ անուր մեծագործութիւնը կ'ունենայ ամբողջ գերդաստան մը բանադրելու, անոր բոլոր անդամները եկեղեցական ամէն իրաւասութենէ զրկելու, անոնց վրայ նոսրէ կարգաւու կոնգակով մը, որովհետեւ, — երեւակայեցէ՛ք աշխարհի վրայ ամէնէն այլանդակափառ արտառնցութիւնը, — այդ գերդաստանին մէջ անառակ օրդի մը կայ եղեր, անարժան, անվայել, հայ եկեղեցւոյ զաւակը համարուելու:

Վարդապետը կը մտածէ, ինքնիրեն դատաստան կ'ընէ, նորէն կը մտածէ, կ'որոշէ, ու կ'որոտայ պառագամը, կը նզովէ, կ'անիծէ, կը բանադրէ ամբողջ գերդաստան մը: Վարդապետը կ'որոտայ:

Այն օրէն որ, խեղճին փչածին համաձայն գործ տեսնալ մեր երանելի վարդապետներուն եւ տէրպապոսներուն առաջին սիրապարտութիւնը եղած է, մէջը պարտաւ խելապատանքներէ բղխած այս տեսակ արտառնցութիւնը պէտք է հաւատալ որ չլուած բաներ չեն, ալ անոնք սահմանուած են առաջինը կամ վերջինը ըլլալու իրենց տեսակին մէջ: Անոնք նաեւ ի վերաբերող պզտիկ հաշիւ մը, ծայրէն զրամին գոյնը ցուցնող կծիկ մը բաւական են ամէն անգամ, որ քրիստոնէական եկեղեցիին հաւատարիմ պաշտօնեան աս կամ ան վարդապետը, գործէ խելքին փչած այլանդակութիւնը, — առանց երբեք խեղճին վրայ խայթ մը դաշու, — հոգ թէ քրիստոնէական վարդապետութիւններու գործադրութեան անունին տակ, ամէնէն անօրինակ արարքը ըլլայ գործուածը, եւ հոգ մայրուած սղառնալիքը ամէնէն մեծ պատահար ամբողջ ընտանիքի մը:

«Տէր-Ոգորմեայ»ի երգեցողութեան չարքին մէջ, պէտք էր մաղթանք մըն ալ մըն չնել այս տեսակ մարդուկներու համար, որ պէտքի անոնք վերջնապէս բժշկուէին իրենց հոգիի եւ ուղեղի ծանր հիւանդութիւններէն:

Օրուան ընթացիկ խօսքերու այս չարքի դուրս, երբ աչքս կ'իյնայ լրագրի մը անկեղծ կորսուող աննշան լուրի մը, խոր վշտակութիւնով մը կը տեսնեմ որ, անկէ՛ ալ ցատկ անդթութեան ձայն մը կը բարձրանայ եւ օրորոնչմար, լուռ ու մունջ կը կորսուի կ'իյնայ օրուան մը կեանք միայն ունեցող բոլոր օրինակներէն մը: — Արմինէ անուրիշ լուրերու չարքին մէջ, — Արմինէ անուրիշ տանքէնիդ տարեկան որբ աղջիկ մը, ինքնաբէշ մէջ, խաբուելով սրիկայ երիտասարդի մը, իր գեռափթիթ տարիքին մէջ, յիշէ մնայ, ու զաւակը վիժելէ ետքը, փողցնելով կ'իյնայ, ճար մը գտնելու իր թշուառ կեանքին: Տեղին թաղական խորհուրդին կը դիմէ անոր պաշտպանութիւնը կը խնդրէ, բայց մերժուելով, երեսի վրայ կը մնայ: Յոյն կ'իյնայ մը, իր տունը կ'առնէ խեղճ աղջիկը, անոր վիճակէն օգտուելով, զաւանափոխ ընելու համար զայն, կ'ըսեն թէ ճարահատ աղջիկը ընդունելու վրայ է դաւանափոխութիւնը:

Չգիտցուիր թէ, Խառքէօյի թաղական խորհուրդն ալ միեւնոյն զրօտանքներով զբաղած է բանկալին մէջ, — ինչ բանով որ Գարթալի թաղական խորհուրդը, — որ լքուած աղջկան մը սղտիկ պաշտպանութիւն մը չկրնար ընել, զայն փրկելու համար ամէն տեսակ մօլորանքներէ, Կամ ինչ կրնայ ըլլալ արդեօք իր պաշտօնը, եթէ ոչ թեւէն բռնելով վեր հանել ցեղերուն մէջ ինկած ողորմելի մը : Արդեօք իր այս ընթացքով քաւե՞լ տալ կ'ուզէ այդ խեղճ թաղական խորհուրդը խաբուող աղջկան մը մեղքը, որ տգիտութեան ու թշուառութեան զոհն է : Յանցանքը ի՞րը կ'ըլլայ վաղը, երբ անիկա ամէն յուսադրութենէ ձարահատ, դաւանափոխութեան մէջ փնտռէ իր բոլոր թշուառութիւններէն ազատումը : Գիտե՞մ, այն ատեն է միայն որ, այդ խնամասիրտ թաղական խորհուրդը կ'արթննայ, իրար կ'անցնի, բաներ մը կ'ըլլայ : Բայց, գործը գործէն անցնելէ ետքը, օգուտ չընենք ու է ջանք :

Տխուր պէտք ըլլար, մինով այս ցաւցնող անցքերուն մէջ թափառելը, եթէ Իզմիր առիթը տուած չըլլար, պահ մը ուշադրութիւն դարձնելու իր վրայ, եւ արձանագրելու արձագանքը այն քանի մը փառալից գործերուն, որոնցմէ շատ քիչ կ'ունենանք զփառազարար Իզմիրի Գթութեան Տունին՝ Ազգ. Հիւանդանոցին Հարկւրամեայ Յօրեւանք մէկ կողմէն, եւ անդուգական գրագէտ Ստեփան Ոսկանի մահաբանին բացումին հանդէսը միւս կողմէն, միաժամանակ կերպով, այն տեսակ հազուադէպ ձեռնարկները եղան Իզմիրցիներուն, որոնց հանդէպ հրճուանքէ տարբեր զգացում մը չունենար մարդ ընդհանրապէս : Որքերեանի բռն յուսեցեցութիւնովը չէ որ հաճելի պիտի ըլլար նկատողութեան առնել նշանակութիւնը այս տեսակ դժուարութիւնով զուլ հանուելիք ձեռնարկներու, որոնց մէջ բաղձացուած բոլոր յուսադրութիւնները կը պակսին միշտ, անխուսափելի կերպով, քանի որ գեղեցիկ գործ մը լիովին գնահատելու չափ կարող եւ անոր առաջացումին համար պէտք եղածին չափ անձնուէր եղողները արժանի ցանուած չեն մեր մէջ : Ազգ. Հիւանդանոցի Հարկւրամեայ Յօրեւանքը տօնելու

գաղափարը եւ զայն իրագործութեան հասցնելն ալ, արդէն մեծ բաներ են, — թո՛ղ Իզմիրի «փոխուած սերունդը» խուսր անտարբերութիւնով մը ուզած ըլլայ ողջունել այդ ձեռնարկը :

Անտարբերութեան նոյն ցուրտ շրջանակովը չպարտերուեցա՞ւ նաեւ ողբացեալ գրագէտը, Ստեփան Ոսկան, իր կենդանութեանը, որուն աղէկ որ մահարձան մը կանգնելու չափ գութ ունեցան Իզմիրցիները : Եթէ սակայն չըլլային իրեն համակրողները, Օ՜հ, ատիկա մտածել մի՛ ուզէք : «Գնա մեռի՛ր, եկու՛ր սիրեմ» ին խօսուն խորհրդանշանն է Ռեֆօռմի անուանի խմբագիրը մեզի համար : Ուղուածին պէս կրնան մեկնել անոր անխախտ քէնը, տարիներով իր կուրծքին տակ անուցած բռննատեղութիւնը իրեններուն դէմ, բայց անոնք որ աններող խստութիւնով մը կը մեկնեն իր այս արարքը, թող ընդունին որ Ոսկանը դատապարտեցին քենտեղու համար, ու հաստատուն նկարագիրով այդ մարդը անոնցմէ չէր որ, երկու օր ետքը աղու պէս կը փոխուէր : Կենդանութեանը ատեն իրեն ցոյց տրուած անգութ անտարբերութենէն ետքը, հիմա իր գերեզմանին վրայ, խուս մը համակրողներու սարքած այդ հանդէսը, գոնէ պզտիկ միւլթարութիւն մըն է իրեն, եւ ամէնէն գեղեցիկ գործը որ կրնար ըլլալ մահուանէն ետքը անոր՝ որուն յիշատակը իր Արեւելքով եւ Արեւմուտքով չմեռնիր երբեք :

Հոյակապ մարդու մը գերեզմանին վրայ արտասանուած այս կցկաւու խօսքերէն ետքը, կը գողգղամ անցնելու պահուս մահուանը ուրիշ տառապող հոգիի մը, որ աննշան, անծանօթ կեանք մը ունեցաւ գիւղի մը մէկ անկիւնը, եւ որուն անձնապանութեան լուրը գրեցին այս շաբթու թերթերը միահամուռ, երկու տողով :

Տարաբաղդ երկտասարդը, Արամ Մուլթաթեան, — դպրոցական հին ընկեր մը, անոնցմէ՝ որոնց յիշատակը չկորսուի երբեք միտքէ, — մէկն էր այն վրդովուած կեանքերէն, կեանքէն դժգոհ, կեանքէն զղուած հոգիներէն, որոնք կը վխտան ամէն միջավայրի մէջ :

Կրակոտ աւիւնով մը սողորուած, ու

կամքի, նկարագրի տէր տղայ, դեռ դպրոցական, ըլլալ կը թուէր մէկը այն հոգեհոգիէն՝ որոնք բան մը կըլլան, եթէ սակայն ցեխառած մարգրիտին պէս աղբերուն մէջ չնետան:

Բայց բազմը ուզեր էր որ ինք ալ անանկ մը ըլլայ, ու երբ, անժամանակ կերպով, դպրոցը ձգեց, — իրեն հետ առնելով ուսման պարսկ պաշար մը, — նետուեցաւ Գարթալի իր հօրենական արտերուն մէջ, պարտիզպանութիւն ընելու, իր բազուկներուն ուժով հողը մշակելու, բանջարեղէն տնկելու հողին մէջ, իր ձեռքերովը, որոնք դեռ քիչ օր առաջ զրիչ բռնած էին, իմաստասիրական գաղափարներ գծողներու համար թուղթին վրայ: Գրագէտէ մը աւելի կը հետեւէր օրուան գրականութեան, իր թեւին ուժերէն քամումը դրամէն մաս մը հանելով թերթերու, եւ գիշերը, իր գեղջուկ տնակին տնկիւնը, ճրագի աղօտ լոյսի մը առջեւ, կարդալու:

Ընթերցումները եւ լաւագոյն կեանքի մը գաղափարը կը գուշակեմ թէ ա՛լ աւելի վերջոված պէտք է ըլլան իր կրակոտ հոգին, իր վիճակին դառնութիւնը չեղեցով, որովհետեւ, թէպէտ, ամօթխածութենէն, իր կոշտ զրազումին սիրահար մը կը ձեւանար, սակայն, քաղաք լքած ատեն, երբեմն իրեն պատահելով, ե՛ս միայն կը հասկնայի թէ, հոգեկան ի՞նչ վրդովանքներու մէջ կը չարչըրկուէր խեղճ տղան, կեանքի արուր հակադրութիւններէն տարուբերուելով:

Չնչին բանէ մը բռնկող իր կրակոտ հոգին, չկրնար հանդուրժել վերջապէս իր քաղաքը կեանքին, ու խեղճ պարտիզպանը չարաչուք որոշումը կը միտէ ուղեգին մէջ: Յասկոտ մեղմադուութիւն մը կու գայ վրան:

Կեանքի իր վերջին օրը, անցած կիրակի, ժամ կ'երթայ առտուն, չապիկ կը հագնի, արուր շեշտերով օրուան գիրքը կը կարդայ, կը լացնէ շատերը, ու մէկէն ի մէկ, չապիկը հանելով, դուրս կը նետուի եկեղեցիէն, կ'երթայ այգեստաններուն մէջ թափափել, կարմիր արեւուն տակ, միշտաւորիկ, խելայեղ, վշտակոծ, — թերեւս վերջին լալագին մնաք բարովի մը համար, իր սիրական այգիին, — ու կը դառնայ տուն, սենեակը կ'առանձնա-

նայ: — Օրերէ ի վեր գիտած 'են եղեր արդէ իր վիճակին փոփոխութիւնը, եւ հրաշքի սիրահարութիւնը, որուն հետ կը խաղայ եղբոր տան ատեն: — Սենեակին խորէն, հրաշքը կը գոռայ, ու ներս վազելով, դետինը փռուած կը դանեն գինքը, աչքէն զարնուած, այլակերպ վիճակի մէջ:

Երկուսը մը կը գտնեն իր քովը, որուն միտնաւասպանը կը յայտնէ «կեանքին վերջ առնուան անհրաժեշտութիւնը, եւ՝ ո՛չ մէկուն պատասխանատու նկատուիլը»:

Բարեբաղդաբար մտային խանգարման արդարացումով մը, գտնէ օրինաւոր թաղում մը չեն զլանար ողբալի երիտասարդին, որ գոկ'երթայ ու գիտէ հոգեկան ի՞նչ չարչրկող ցուերու:

Միտքէս չի հեռնար բաղդին ձգուած իջաւախց կեանքը, հողերու մէջ զլաւարդ իրաւ գործաւորի իր տքնութիւնը, իր հոգի ցնցող վրդովանքները, հողագործի կեղծութակ իր անզուգական ներքին մարդը, ու իմաստեմ թէ իր աննշան, անտեսուած կեանքին յիշատակին համար, չառ չէ՝ երկու խօսք, իր կցկցուր դամբանական մը անունին՝ որ լքուած, զրկուած աննշանութեան մը մէջ, ամէնէն նշանակալի կեանքը ապրեցաւ, նման դեռ չ'առ մը որիչ այնկոծեալ ու տարաբաղդ կեանքերու մարդկային ամբոխին մէջ:

ՍՊԵՆՍ

ՍԵՒ ԲԱՂԴ

Յօգեւորդ պե՛րն կամարին սակ,
Ծաւի աչքերդ յա՛ր լուսաւող,
Յոյքեր ունիմ սիրեք մաւող,
Երբոր ինձի յառիմ շիտակ:

Կ'ըսեմ. անուրէս ինձ անգիտակ
Խորեք ունիմ խորհրդաւող,
— Յօգեւորդ պե՛րն կամարին սակ —
Ծաւի աչքերդ յա՛ր լուսաւող:

Բայց ինձ համար միտ անգիտակ
Է նայուածքդ՝ խորհրդաւող համակ,
Դուցէ իմ բաղդս Է դրժնալ,
Որ չի տեսնեմ աչք՝ սիրեք բուժող,
Յօգեւորդ պե՛րն կամարին սակ:

ՎԱՐԳՅԵՐ

ՍՏԵՓԱՆ ՈՍԿԱՆԻ

ԴԱՄԲԱՐԱՆԻՆ ԱՌՋԵԻ

—> ԶԵՆՈՐ <—

Ստեփան Ոսկանի մահարձանին բացման հանդէսը տեղի ունեցաւ երէկ ։ Որչափ որ կը յիշեմ՝ առաջին անգամ ըլլալով Թրքահայե-
րուն մէջ կը կատարուի այսօրինակ հանդէս
մը, ինչ որ անշուշտ յորեկեաններու սրտա-
պնդող օրինակներէն յետոյ՝ միւրթարակաւ եւ
յուստատու սկզբնաւորութիւն մըն է գրական
աշխարհին համար ։ Վերջապէս մեր ժողո-
վորըը սկսած է քաջալերանքի կաթիլներ
կաթնցնել իր գրչի արժանաւոր աշխատուոր-
ներուն վրայ ։ մաղթենք որ այդ կաթիլները
խառնան ։

Իրապէս գովելի է այս նոր երևոյթը եւ
պատիւ կը բերէ զայն յգացողներուն, որոնք
հանգուցեալին բարեկամներէն հետեւեալներն
են, Տեառք՝ Գալուստ Մարկոսեան, Գ. Յ.
Բաբաղեան, Դէօրդ Պուպլի, Յակոբ Ալիփար
եւ Խոսրով Եփրեմ ։ Այս աղետասիրտ ան-
ձերը, նախ՝ փոթկոտ ու ջանադիր գտնուե-
ցան մահարձանը կանգնելու, հանգանակելով
պահանջուած գումարը համակիր-բարեկամ-
ներու շրջանակի մը մէջ, Եւ երբ հիմա անոր
աւարտումէն ետքը կը ձեռնարկեն ու զուլս
կը հանեն իսկոյն՝ բացման հանդէս մը կատա-
րել, հաւատացէք որ դորձը ինքնին որչափ
ալ պարզ ու զիւրի՝ ունի իր մէջ գաղափարի
եւ զգացումի այնպիսի բարձրութիւն մը որ
թերեւս շատ մը իրրեւ փայլուն ընդունուած
գործեր անոր չեն հասնիր ։

Անհետացած գրագէտի մը անունին նուիր-
ուած այս մահարձանը՝ եւ անոր յիշատակին
ի պատիւ սարքուած հանդէսը, անգամ մըն
ալ ցոյց կուտան թէ արժանիքները որչափ ալ
անտեսուին՝ չեն մոռցուիր, որչափ ալ նիւ-
թապէս չի վարձատրուին ժամանակին, բա-
րոյապէս կը գնահատուին օր մը ։ ու այս
վերջին գնահատումը շատ մեծ նշանակութիւն
ու արժէք ունի ամէն անոնց համար՝ որոնք
կենքի մասին սահմանափակ ու մանաւանդ
զանիկ ըմբռնում չունին ։

* * *

Երբեք անգ Ժողովներով հիւսուած Ս. Ո.
տառերը որոնք երէկ դրուած էին անոր ձե-
նեղէն գերեզմանաքարին վրայ, հոն դամ-
ուած էին կարծես իրենց թարմ՝ ու հոտաւէտ
հանդամանքներով ցուրտ շիրմին կենդանու-
թիւն բերելու քիչ մը, ու անոր շուրջ խմ-
բուած բարեկամները իրենց բարախող սրտե-
րով եկեր էին ցոյց տալ թէ, հոգին խիտ ու
թանձր վարագոյրը չէ՝ կարող մոռացութեան
գոգը տանիլ ինչ որ սիրուած է, եւ ինչ որ
սահմանուած է ապրելու՝ գէթ սրտերու մէջ ։

Մահարձանը օրհնելու արարողութիւնը ա-
ւարտած էր արդէն, երբ Պ. Գարեգին Բա-
բաղեան խօսք առաւ եւ զգայուն շնչով
կարդաց դամբանական մը որով կը դրուածէր
Ոսկանի գրական ու անհատական արժանիք-
ները ։ Յետոյ Ֆրանսացի ուսուցիչ մը, Mr.
T. B. Heroguer, որ արդի «La Réforme»-ի
մէջ խմբագրականներ կը գրէ, կարդաց —
ինքն իսկ շատ յուզուած — որտաղեցիկ
դամբանական մը ։ Ոսկանի՝ Ֆրանսերէն լե-
զուին համար ունեցած սէրը՝ մասնանշեց եւ
անոր հմտութիւնը գովեց, երեւան հանելով
մանաւանդ հանգուցեալին մտաւորական բարձր
կարողութիւնները ։ Ասոր յաջորդեց Պր. Բի-
թաքիսի ճառը — Բիթաքիս՝ ծանօթ դէմք
մըն է Յոյներուն մէջ իրրեւ հմուտ ու խոհուն
անձնաւորութիւն մը եւ իրրեւ գրող — որ պեր-
ճախօս ատենաբանի մը ամբողջ հմայքով ար-
տասանեց հակիրճ ու իմաստալից դամբանա-
կան մը, որու խօսքերը խորապէս ազդեցին
ժողովուրդին վրայ ։ Ամենէն վերջը Պ. Պերճ
Բարսեղեան հանգուցեալ գրագէտին ստանա-
ւորներէն հատ մը կարդաց որ պարագային
յարմար բան մըն էր ։

Հանդէսը պարզ անցաւ, պատկառոտ բան
մը ունէր սակայն իր մէջ, որովհետեւ մաքր
մեծ աշխատաւորի մը յիշատակին նուիրա-
գործումը եղաւ ։

* * *

Ոսկանի մասին բաւական բան գրուեցաւ
ասկէ շուրջ տարի մը առաջ, երբ իր մահ-
ուամբը այժմէութիւն կը ստանար իր անունը
եւ ապահովաբար կարող գրիչներ սիրուն գործ
մը կատարած կըլլան՝ անոր գրական գործու-
նէութեան մասին խզճամիտ ուսումնասիրու-

թիւն մը պատրաստելով, երբ մանաւանդ լոյս տեսնէ հանգուցեալ գրագէտին բանաստեղծութիւններու մէկ հատարը՝ որուն տալազրութեան հոգը ստանձնած են նորէն իր համակիր բարեկամները : Հոս տարբեր կէտի մը վրայ կուգեմ ծանրանալ :

Ոսկան՝ եթէ նշանաւոր եղաւ իբրեւ գրագէտ ու հրապարակագիր եւ եթէ շատ բան կը պարտի մեր գրականութիւնը անոր, ատիկա պատճառ մը չէ որ իր մէկ խոշոր թերութիւնը չի մատնանշինք անգամ մըն ալ, եթէ ոչ ուրիշ բանի՝ գէթ անոր աչքառու տղեղութիւնը շեշտելով, օգտուելու ու անկէ դաս առնելու համար :

Ոսկան ինչո՞ւ քէն պահեց ազգին դէմ, եւ ի՞նչ քէն էր այդ որ երեսուն տարիներ տեւեց մինչեւ իր վերջին շունչը, իր վերջին կայանը : Եւ որպէսզի այլեւայլ առարկութիւններու տեղի չի տան այս տողերը, կանխաւ ըսենք եւ ընդունինք թէ իրական ու շօշափելի պատճառներ գոյութիւն ունեցած ըլլան զինքը մեղմէ պաղեցնելու, ընդունինք թէ մեր ազգայիններուն կողմէ անիրաւութիւններ եղած ըլլան իրեն. բայց աս ամէնէն ետքը կը համարձակինք հարցնելու վերստին թէ՝ ատենք բաւական զօրաւոր չարժաւորթնե՞ր էին զինքը քէնցնելու, ո՛չ. որովհետեւ այն մարդը որ իր ազգին գրականութեան ու կրթութեան համար կ'աշխատի, պէտք է ունենայ մեծ հոգի մը, լայն սիրտ մը, ներելու նոյն իսկ ամենէն աներեւակայելի աղտոտութիւններու : Մեր մէջ ո՞ր գրողը չէ բաղխած նոյն այդ անիրաւ պարսաւանքներուն. ամէնքն ալ գրեթէ. եւ ի՞նչ պիտի ըլլար մեր գրականութեան վիճակը եթէ ամէն տաղանդաւոր գրող անոր պէս կ'զիւրացեալ դիրք մը բռնէր, եթէ Ոսկանի արժանիքները գնահատուէին վիճակի մէջ չէր մեր հասարակութիւնը. ահա՛ պարագայ մը զոր իրեն կը վերաբերէր պարզել, հաստատել, յարատեւելով իր գործին մէջ :

Ծնողքը կը նետէ՞ մէկ կողմ իր զաւակը որովհետեւ անառակ է, կը վռնաէ՞, կ'անտեսէ՞ որովհետեւ, ապերախտ է. ընդհակառակը, կը զգուշացնէ, կ'աշխատի ուղիղ սորվեցնել : Եւ միթէ կրթական ու գրական

մարդիկները ծնողքը չեն իրենց պատկանահասարակութեան ու ծնողքներու յատուկ մեծ հոգին պէտք չեն կրել. ահա՛ ինչ որ պակասած է Ոսկանին. արտի լայնութիւն չէ ունեցած ընտել, հոս է ցաւալի կէտը ուր կը պզտիկնայ մեծ մարդը, որուն բեղմնաւոր ուղեղէն շատ բաներ պիտի կարողանային քաղել, եթէ մեզ հետ սրտողած չըլլար եւ ինքը ունենալով իր մէջ շատ մը օգտակար տարրեր՝ չի զլանար մեզի :

Գրականութեամբ ու մերինն նման ժողովուրդի մը կրթական գործով զբաղողը պէտք են աշխատիլ ներքին գոհունակութեան մը համար եւ արտի ու հոգիի անցը մեծութեամբ մը պէտք են ներել ամէն բանի ու ձգտիլ զէպի իրենց բարի նպատակը :

Ոսկանին այս թերութեան յիշատակումով նպատակ չունինք բնաւ անտեսելու այն փանայլի վերը զոր խաղացած է ան մեր գրականութեան մէջ. չեշտելով այդ կէտը, ու գեցինք պարզապէս կրթութեան ու գրականութեան աշխատանքները քաջալերել իրենց գործին մէջ, որպէսզի յարատեւողներ ըլլան ինչպէս յարատեւեց Մամուրեան, եւ ինչպէս կը յարատեւէ Պէրպէրեան, որոնք անուշաբէթ հոգիի մեծութենէ վուրկ ըլլային, պատճառներ չպիտի պակսէին անոնց համար այսպարէզէ շատոնց ի վեր քաշուած ըլլալու :

Ոսկան, սակայն, կարճ ժամանակի մը մէջ կատարած է անանկ գեղեցիկ՝ գործ մը որ ատիկա բաւ պիտի ըլլայ իր պատկանելի անունը ապրեցնելու ու մեր գրական համայնութեան պատմութեան մէջ ամենէն փայլուն տեղերէն մէկը գրաւելու : Ոսկանի ու իր նմաններուն է որ կը պարտինք մեր արդի աշխարհաբարը :

ԻԶՄԻՐ, 16/29 Ապրիլ

ՂՈՒԿԱՍ ՎԱՐՊԵՏԵԱՆ

Յաւով կ'արձանագրենք Վսեմ. Իլիաս Էֆ. Չայեանի մահը : Հանգուցեալը, ծանօթ եւ համակրելի դէմք մըն էր, երիտասարդ հասակէն Պետական ծառայութեան մէջ մտած, ուր իր կարողութիւնը եւ բարոյք ծառայութիւնները գնահատուած էին՝ արժանաւորուած պէս : Ազգային չըջանալի մէջ ալ անձնակցաւ աշխատող մը եղած էր միշտ, եւ վերջին անգամ կ'անդամակցէր Քաղ. Ժողովին : Պատրիարք Հայրը նախագահեց յուզարկուածութեան հանդէսին որ կատարուեցաւ Մաքրիքիւղ, եւ յուզիչ դամբանական մը խօսեցաւ :

ԳԵՐՄԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՆԵՐՏՆԱ

Վ. Է. Պ. ԲԱՌԻՆԻ, ՀԱՅԶԵՐ

Թիւ 5

Հուիճի շարունակեց .

— Մենք մեզի կ'ըսէինք թէ չէինք կրնար ասիլէ աւելի յարմար փեսացու մը գտնել, որ թէ՛ լաւ խնամէր մեր աղջիկը եւ թէ՛ լաւ վարուէր անոր հետ : Ներքինան ալ մեր կարգադրութեան հակառակ չէր երեւար, թէպէտ անոր վրայ այնչափ խանդավառութիւն չէինք տեսնել որչափ երկատասարդին վրայ : Աղջիկս տասնը-վեց տարեկան էր այն ատեն . մէկ տարիէն Խիկին պիտի ըլլար . բայց որովհետեւ կուրծքը առողջ չէր, ուստի որոշած էինք տարի մըն ալ մեր քովը պահել, ինչ որ մեծ դժգոհութիւն պատճառեց Անթոնիո ասպե-տին : Բայց երկատասարդը ստիպուեցաւ հա-մակերպելու, եւ անոր խոստացանք դարնան Անթոնիո տանիլ իր նշանածը : Ո՛հ, Պարոն կոմս, ահա այդ ատենէն սկսաւ մեր դժբախ-տութիւնը : Ասկէ ի վեր երբեք հանգիստ քուն քնացած չենք եւ միշտ ալ արցունք-ներով բացած ենք մեր աչքերը :

— Անթոնայի մէջ ի՞նչ պատահեցաւ : Արդ-եօք ձեր աղգակմանը սիրալիր ընդունելու-թիւն մը չըրի՞նք ձեզի :

— Ո՛հ, ո՛չ, Պարոն կոմս, այդպէս չեղաւ : Ամէն բան տակնուվրայ ըրին՝ դմեզ հիւրընկա-լելու համար . մեր երթալուն վրայ ծնողքը աւելի ուրախացած էին քան թէ Անթոնիո . բայց Ներքինա բոլորովին անտարբեր էր : Առաջին վայրկեանին երբ նորէն տեսաւ իր նշանածը, ըսաւ մօրը որ զինքը տուն տա-նին, որովհետեւ ինքզինքը անկարող կը զգար Անթոնիոն սիրելու, անոր կինը ըլլա-լու, եւ թէ այս դադափարը չատ կը տան-չէր զինքը :

— Արդեօք ի՞նչ թերութիւն գտած էր աղուն վրայ :

— Ոչինչ, քանի որ աղան իրեն նման երի-տասարդներէն տարբերութիւն չունէր . գուցէ զայն չէր սիրել . նոյն խակ կրնար պատահիլ որ անկէ վախճար կամ ատէր զայն, միմիայն մտածելով թէ ինքը անոր կը պատկանի : Կ'երեւակայէք անշուշտ, Անթոնիո ձիաքօմօ, թէ տասնըեօթը տարեկան Խիկին աղջիկ մը որ պէտք է հիանար այդ տեսակ յարմար ա-մուսին մը գտնելուն վրայ, — ամուսնու-թիւն մը որ Անթոնայի բոլոր քաղքենի աղ-ջիկներուն զգլխում մը կը պատճառէ, — չի՛ բաղձար այդ երջանկութեան : Ի դուր աչ-խատեցայ, բան մը չկրցայ ընել այդ մասին : Անշուշտ երկինքն է որ այս փորձանքը մեզի կը զրկէ : Եւ սակայն չենք կրնար յանցանքը հէք աղջկան վերագրել, որովհետեւ չափա-զանց բարի արարած մըն է : Իրաւ է թէ, փոխանակ իր մօրը, ե՛ս ստանձնեցի անոր երես առ երես խիստ լեզուով մը խօսիլ, մատ-նանիչ ընել թէ ո՛րչափ զնա կը պատճառէ մեզի իր այդ ընթացքով, բայց ան լսիկ մըն-ջիկ երեսս կը նայի, խօսք մը ունի միայն որով ուզածին պէս կը դարձնէ զիս : Ո՛հ, Պարոն կոմս, երանի՛ թէ զայն մեզի չափ ճանչնայիք : Անտանիկի բան է չափահաս դա-ւակներ ունենալ, որոնք իրենց ծնողքը կ'ա-ռաջնորդեն, փոխանակ իրենք անոնցմէ ա-ռաջնորդուելու :

— Անկեղծօրէն կը կարեկցիմ ձեզի, սի-րելի բարեկամս, սակայն չեմ ալ գիտեր թէ ի՞նչ միջոցով կրնամ այդ տաքնապէս աղա-տել դձեղ :

Մարդուկը անոր երեսն ի վեր նայեցաւ վստահ դէմքով մը . բայց չէր կրնար իր միտ-քը տանջող այս դադափարը իրեն վերապա-հելու որոշում տալ :

— Շատ ձանձրայի է ասիկա, բոլոր զուտը որորելով : Դուք դիմանալան մըն էք, բոլոր հին գիրքերը կարգացած էք, եւ ժամանակ չունիք այս տեսակ ճղճիմ բաներով դադարելու : Իրիկունը երբ աղջնակս տուն դարձաւ, պատմեց թէ ձեզի հանդիպած էր, եւ զուք ալ շատ մտերմաբար խօսած էիք հետը . կըսէր թէ չէր ճանչնար մէկը, որ իրեն այնչափ յարգանք ներշնչէր օրչափ զուք, թէ ձեր խօսքը Աստուծոյ, ճիշդ Աւետարանի խօսքերուն պէս կ'ընդունէր : Ամբողջ իրիկունը այնչափ զուարթ էր, այնչափ շատ կը խօսէր որ Անքոնայէն վերադառնալէն ի վեր զինքը ասանկ չէինք տեսած երբեք, եւ զիշերը ուշ տատն լսեցինք նաեւ որ կ'երգէր : — «Ինծի նայէ՛, կ'ընէր կ'ինն դեռ երէկ իրիկուն, չըլլար որ երթաս ասեղիս երկաթաբարդ կամը, եւ խնդրես անկէ որ դոյ տեսնէ մեր ներինան, անոր հետը խօսի ու խեղքը զուտը բերէ : Եւ երբ փողոցին մէջ մէկուն ոտնաձայնը կը լսէ, կը յարէր կ'ինն, տեսա՞ր թէ ինչպէս աչերը կը վալլին . երբ անոր քովը երկաթաբարդ կամին վրայ խօսուի, դիտած ես թէ ան ալ ինչ հիացումով կը խօսի անոր հանձարին ու բազմակողմանի հմտութեանը վրայ» : — Անա ինչ որ կ'ինն կ'ընէր երէկ . եւ այս առաւ դարձեալ միեւնոյն աղիւթիան սկսաւ . ես ալ բոլոր քաջութիւնս ամփոփեցի, սիրելի Պարոն կոմս, եւ մտադրեցի այցելել ձեզ, հարցնելու թէ կը հաճիք մեր սիրելի աղջկան քովը գալ ու համոզել զինքը Անթոնիօին հետ ամուսնանալու :

Լէօբարաի՛ ճնշուած՝ նորէն թիկնաթոռին մէջ ինկաւ, աչքերը գոցեց, եւ աւելի քնանալու արամադիր էր քան թէ բռնութեամբ մաքառելու իրարու ներհակ զգացումներու դէմ : Երբ վշտահար հայրը վերջացուց իր խօսքը, վայրկեան մը, դարձեալ վայրկեան մը կոմսը անշարժ մնաց, այնպէս որ խեղճ մարդը կարծեց թէ ապարդիւն գիմաւ մը բրած էր . այս երկաթաբարդ կոմսը, որուն հասցէին այնչափ գեղեցիկ ներքով մը ուղղած էր անոր աղջիկը, միայն բարեսրտօրէն ունկնդրած էր անոր մինչեւ վերջը, զրացեալ կան յարաբերութիւնները յարգելու համար . սակայն այդ միջոցին քնացած էր կամ քնանալ

կեղծեր էր անկէ օծիքը աղատելու միտքով : Բայց այդ միեւնոյն վայրկեանին, կոմսին կրտսեր եղբայրը, երկուստարդ Քարլօ, ձիաքամայի սիրականը, ներս մտաւ եւ աղմուկ բարեւով մը խզեց այս լուսնիտըն :

Բանաստեղծը կամացուկ մը օտքի ելաւ եւ ձեռքը երկնցնելով այցելուին որ արդէ չուարած էր, բոլաւ .

— Կը խորհիք այդ մասին, Պարոն Լուիս : Այս իրիկուն իսկ փոխադարձ այցելութիւն պիտի տամ ձեզի, եւ զուք ցոյց պիտի տաք ինծի այդ համբաւաւոր նկարը : Աստուած սոյ որ առիկայ Ռաֆայէլի մէկ զորքը ըլլայ եւ կարենաք քանի մը հազար Փրանցիշա մը հանել անկէ : Երթաք լարով, թէ կողմէս բարեւ տարէք ձեր բարի կնոջ, նորհալուելով յայնանցէք անոր այն քով կարծիքին համար զոր իմ մասին կազմած է իրբեւ գեղարուեստական առարկաներէ հետ կըցող մէկը :

Ե.

Կէս օրուան քնոյ ժամերը անցած էին արդէն, երբ բանաստեղծը մեկնեցաւ իրենց տունէն ու իր զրացիին բնակած տան ցած գոնէն ներս մտաւ : Դրան քովը, պատուանին քառակուսի մէկ ապակեղարանին մէջ ցուցադրուած էին լեռնաբաններուն գործածած գլխարկին նման երկու գլխարկ . շիտա զին անունը ձերմակ խոշոր տառերով նկարուած էր զրան վերեւ սեւ նշանաւորութեան մը վրայ : Կարծես թէ տանուաէրը հանդիսաւոր օր մը կը նկատէր այդ օրը, ուր իր զրացին փոխադարձ այցելութիւն պիտի տար իրեն, որովհետեւ կիրակնօրեայ գլխարկը հազած, զրան մօտ սղախի նստարանի վրայ կը սպասէր : Երբ Լէօբարաին եկաւ, քաղաքավարութեամբ օտքի ելաւ, ու ան նստալիր բարեկենդիկ ետքը, տան ներքեւ աղջնորդեց զայն :

— Այս մասին բնաւ բան մը չխօսեցանք աղջկանս, փոխապէս կոմսին աղանձնի վրայ զայն առաջնորդելով նեղ ու մութ սանդուղի մը որ վերնայարկը կը տանէր : Շատ հետաքրքիր աղջիկ մըն է, քիչ մնաց որ տունէն փախչէր, եւ ձեր յանձն առած ներդրութիւնը անօգուտ գործնէր բոլորովին, ներդրում

եղիք մեր խեղճուկրակ բնակարանին համար . մենք համեստ մարդիկ ենք . Պարոն կոմս , չառ համեստ . ասկէ աւելի լաւ օրեր ունեցած ենք , եւ այդ օրերը կրնան վերագրաւուալ՝ եթէ իրերը պէտք եղածին պէս յաջորդեն իրարու :

Ընդարձակ՝ բայց ցած ու անպաճոյճ սենեակին մէջ , սրուն ամբողջ կահաւորումը կը կազմէր մէկ արմկաչափ լայնքով յարդէ անկողին մը , Ներինայի մայրը զիմաւորեց զանոնք եւ սիրալիր շեշտով մը քաղաքավարութեամբ ողջունեց այցելուն : Յայտնի էր թէ ասանկիկնը աւելի աղնուատո՞մ ընտանիքի կը վերաբերէր քան իր ամուսինը . ամէն պարագայի մէջ , անոր հանդարտ եւ գունատ երեսին զիմագիծերը , ածուխի պէս սեւ բայց մարած աչքերը , որոնք իր աղջիկը կը յիշեցնէին , շատ լաւ կրնային հարուստ տան մը հարսը ընել զինքը : Նոյնպէս , իր պարզ ողորդարդը շատ ճաշակաւոր էր , եւ տեսակ մըն ալ հրապոյր կ'ընծայէր իր զեղազիտակ հասակին :

Այս այցելութեան իրր պատրուակ եղող նկարը կախուած էր փողոցին վրայ շայող երկու պատուհաններու միջեւ , շատ անհրաժեշտ լոյսի մը գէ՛մ : Լէօբարտի առաջին ակնարկով հասկեցաւ թէ նեղութիւնը չէր արժար վար առնել ու աւելի մօտէն լոյսի առջև քննել զայն , որ Տիրամօր հանրածանօթ մէկ պատկերէն արտանկարուած էր վաճառականի մը կողմէ : Այդ պատկերը կրնար շատ վայելուչ ըլլալ եկեղեցիի մը աւագ խորանին , բայց եւ այնպէս պէտք չիկար ափսոսալու որ Րէքոնաթիցի պղտիկ արհեստաւորի մը տունը ցած ու մութ սենեակի մը մէջ երեսի վրայ ձգուած էր :

— Ես ալ շատ կը տարակուսէի այդ մասին , բաւ տէրը ուսերը բարձրացնելով , շրջանակին մէկ մասը լախով մը սրբելէ եւ վաղեցնելէ հտը . լաւ բաները չեն կորսուիր իմ տանս մէջ . ես այն մարդոցմէն եմ , որոնք զոչ չեն ունենար երբ . ապուրը գտնուի : Երեսելի հրաշք մը պիտի ըլլար եթէ ուրիշ կերպ պատահէր տանս մէջ : Թո՛ղ որ ես չպիտի արանջամ այդ մասին . . .

Խօսքը չկրցաւ աւարտել , որովհետեւ այդ

միջոցին դուռը բացուելով նորաւի աղջիկը ներս մտաւ : Բանէ մը տեղեակ չէր ան . այս այցելութիւնը անակնկալ էր իրեն համար : Ներկայացաւ այն զգեստով զոր կը հաղնէր անական գործերով զբաղած ատեն . շրջազգեստը քիչ մը մաշուած էր , եւ արդէն այնչափ կարճ՝ որ անոր ոտքին նուրբ կոճերը կը տեսնուէին . իրանամասին վրայ խաշածեւ հաստատուած էր թեթեւ կերպասէ թաշկինակ մը որ վիզն ու կուրծքը կը ծածկէր , իսկ թեւերը մերկ էին : Ներինա չիկնեցաւ եւ պղտիկ ճիչ մը արձակեց երբ նշմարեց Լէօբարտին ոտքի վրայ , ծնողացը քով : Անմիջապէս սթափեցաւ , ձեռքը պարզապէս մազերուն վրայէն անցուց եւ մօտեցաւ առանց չփոթութիւն մը ցոյց տալու : Լէօբարտի ա'լ առկի հիանալի դառա զայն այս առտնին անզարդ տարազին մէջ . կը կարծէր նաեւ թէ այս օրուն դէմքին վրայ աւելի կենդանի , աւելի թարմ գոյներ կը նշմարէր , երբ զայն կը բաղդատէր մօրը թարչամած զիմագիծերուն հետ : Ի՞նչպէս յստակ եւ ուրախ ձայնով կը խնդար Ներինա , երբ հայրը նկարին պատմութիւնը կ'ընէր անոր , թէ ինքը մինչեւ այն ատեն հաղուազիւտ բան մը նկատած էր , մինչդեռ , Պարոն կոմսին խօսքին նայելով , զայն տեղէն վերցնէր իսկ չէր արժեր :

— Անքծնայի մայր եկեղեցիին պատկերները չէի՞ք տեսած , հայրիկ , հարցուց դեռաւոր աղջիկը : Հո՛ն միայն մարդ կրնայ սովորիլ թէ ինչ բան է գլուխ-գործոց մը : Բայց եւ այնպէս ես շատ կը օրհնմ մեր պատկերը . ան միշտ աչքին առջեւն է այն փամանակն ի վեր , ուր մայրիկը աակաւին թեւերուն մէջ կը կրէր զիս , եւ վերջն ալ երբ նեղութիւն մը ունենայի , անոր տեսքը բարերար ազդեցութիւն մը կ'ընէր վրաս , բաւական էր որ ակնարկ մը նետէի անոր վրայ : Այնպէս չէ՞ , մայրիկ , նոյն իսկ շատ դրամով չպիտի ծախէինք զայն : Ու բարեբախտաբար մէկը չպիտի ներկայանայ զայն դնելու համար :

Մայրը , որ լուռ կենալով մէկտեղ չէր գողորած մտաւանջ ակնարկով մը իր զաւակը դիտելէ , դուրս ելաւ այն ատեն . հինգ վայրկեան վերջը դուռը բացաւ եւ ամուսինը կանչեց , խնդրելով անկէ որ վայրկեան մը վար

իջնէր խօսելու համար մէկուն հետ, որ ընելիք յանձնարարութիւն մը ունէր ։

Արհեստաւորը ներում խնդրեց իր հիւրէն եւ սննդակէն դուրս ելաւ ։ Լէօբարտի մանկահասակ աղջկան հետ մինակ մնաց ։

Բանաստեղծը մինչեւ այն ատեն առիթ չէր ունեցած խոստովանահօր դեր կատարելու, բայց հիմա ստիպուած էր կատարել՝ առանց ուրիշներէ նշմարուելու։ Եւ այն անրիժ աչքերը, որոնք անթաքթ իրեն կը նայէին, լուրջովին կը քանդէին այն ծրագիրը զոր Ժամանակ ունեցած էր կազմելու ։

— Ներինա, բաւ անոր ձեռքը լսենելով քչիկ մը վատահուլթիւն ունի՞ս վրաս ։

— Ո՛հ, չա՛տ, պատասխանեց մանկամարդ աղջիկը տեսակ մը համակերպութեամբ զիտելով զայն ։

— Կը տեսնեմ արդէն, փոքրիկ բարեկամուհիս, եւ ճիշդ այդ է որ զիս քաջալերեց գալու քեզի հետ խօսելու այնպիսի բանի մը վրայ, որ հոգ կը պատճառէ ինծի ։ Դուն չատ բարի ծնողք ունիս, Ներինա, կը սիրե՞ս զանոնք ։

Նշանով միայն պատասխանեց, բայց լուրջ ու սգեւորուած գէմքով մը, ձեռքը սրտին վրայ դնելով ։

— Եթէ կը սիրես զանոնք, ինչպէս որ արժանի են, ինչո՞ւ համար վիշտ կը պատճառես անոնց ։ Հայրդ պատմեց ինծի թէ շատ պարկեշտ երիտասարդի մը հետ նշանուած էիր, եւ թէ այս ամուսնութիւնը երջանկաբեր պիտի ըլլար ձեր ամէնքին համար։ Ինչո՞ւ յանկարծ հրաժարեցար այս ամէնէն ։ Ինչո՞ւ ա՛յլ չես ուղեր այս նշանածը, եւ բնաւ դոհացուցիչ բացատրութիւն մը չես տար մօրդ թէ ի՛նչ պատճառաւ փոխեցիր որոշումդ ։

Իրեն նշանախօսութիւնը յիշեցնող առաջին բառերուն արդէն մանկահասակ աղջիկը ետին դարձած էր, զլուրը կուրծքին վրայ հակած։ Կոմսը դիտեց թէ ան ո՛րչափ շուտով կը դադար այս մասին իրեն ըսելիքը ։ — Հայրս կարեկցեցա՞ւ իմ վրաս, հարցուց վերջապէս նուազուն ձայնով մը ։

— Կը սիրէ քեզի, Ներինա, կը փափաքէր երջանիկ տեսնել քեզ, ու հիմա կը ցաւի տեսնելով որ կը մերժես քեզի համար իր փնտռած գտած երջանկութիւնը ։

— Ինծի համար երջանկութիւն. ու գէ՞մք որ հետզհետէ ծիրանեւիայ կը նկարուէր, դարձեալ խոնարհեցաւ ։ Ո՛հ, երանի թէ զխոնարհիք, Սինեօր ձիաքօմօ ։ Բայց ինչո՞ւ կը խօսիմ այդ բանին վրայ ։ Ձէ՞ք կրնար այնպէս ընել՝ որ իրերը ուրիշ կերպարանք ստանան . . . Եւ սակայն . . . դուք միայն . . . դուք միայն սորվեցուցիք ինծի թէ երջանկութիւնը անոր մէջ չկայանար . . . Ինծի համար . . . նոյն իսկ եթէ հոն ըլլար, ինչպէս կը կարծեն հայրիկս ու մայրիկս ։ Ժարդ մարդու չնմանիր, եւ սակայն ամէն ոք իրեն առանձնայատուկ երջանկութիւնը կ'ուզէ, ճիշդ չէ՞, Սինեօր ձիաքօմօ ։

— Իրաւունք ունիս, զաւակս, ես ալ արդէն չեմ կրնար մեղադրել քեզ ։ Ե՛ս ալ կ'ուզէի երջանիկ ըլլալ այն բանով որ սիրովանք պատճառած է շատերուն ։ Բայց ո՞ւր սորվեցուցի քեզի այդ ամէնը ։

Ներինա աչքերը պատկերին վրայ սեւեռեց, եւ այն միջոցին երբ վառ կարմրութիւն մը կը ծաւալէր անոր այտերուն վրայ, հետեւեալ տողերը արտասանեց, զորս Լէօբարտիի զրբքոյկին մէջ կարդացած ու միտքը պահած էր ։

«Կը յիշեմ այն օրը, ուր առաջին անգամ սիրոյ հետ մաքառեցայ եւ ըսի ինքնիրենս։ Այս է ուրեմն սէրը։ Ո՛րչափ ցաւալի բան ։ Եւ աչքերս գետնին վրայ սեւեռած մնայի՛ս սակայն, աւա՛ղ, սէրը միայն տեսայ, որ անմեղունակ գէմքով մը իր նախաշաւիղը կը բանար մինչեւ սիրտս ։ Ո՛րչափ անթաքթ վարուեցար հետս, ո՛վ սէր ։ Ինչո՞ւ համար այս գողարիկ կիրքը կը գահավիժէ զմեզ այսչափ ցաւերու, այսչափ նեղութիւններու մէջ ։ Քաղցր չէր, նպաստաւոր չէր այն նորատաց սփռ որ կը զգայի թէ կը տիրապէտէր ներսդիւս ։ ան իր հետը բերաւ ցաւ ու արտունջ, եւ արամաղդեցիկ անձկութիւն մը ծանրացաւ վրաս ու ճմլեց սիրտս ։ Ո՛րչափ սիրուն կ'երեւար ինծի այն գէմքը, եւ ինչպէ՛ս կը յանկուցանէր զիս մթութեան մէջ ։ Նոյն իսկ երբ արտեւանունքներս կը գոցէի կը տեսնէի զայն տակաւին բազմերանդ պատկերներու պէս» ։

(Շարունակելի)

Ս Փ Ե Ն Բ Ս

Անապատը, բուրգերուն ոտքն, անձուներեն,
կապույտ երկնի ճեղքութեան տակ, Սփինքսին խոր
Աբքերն՝ յորդուած պարապներէն և ըստուերէն,
Գեղի հեռուն, կը սուեռուին՝ խորճրդաւոր:

Յախտենի լռութեամբը՝ կախարդօրէն
Կը պատանքէ անցնող դարերն, ու հեռաւոր
Հրմայքներուն՝ կը ժրպտի դեռ, քերանն իրեն,
Զինասկըցուած գաղտնիքն է ան, նոյնն՝ ամեն օր:

Անկոծուած մը՝ արեւին տակ, քայց լոյսէն զուրկ,
Հացումն է, միշտ անպատասխան. կոռքն երազին.
Անանձան խոկն՝ համբուրելով շեղջն աւազին:

Կինն է, անկոծ. գաղտնիք, հարցում և անկոծուած:
Սփինքս մը կայ կընոջ սրբանի մէջ, սիրոյ կուռք:
Բնեռազիր, երկուքն ալ, դեռ, չի կարդացուած:

Հելլաւան

ՎԱՅԱՆ ՄԱԼԷՋԵԱՆ

ՄՕՐՆ ԱՆԷԾՔԸ

(ՆՈՐԱՎԵՓ)

Գ. ԶՕՂՄԱՊԻՆ

Իրիկունը զուարթ էր:

Գեղին մէջ չաբաթ իրիկունները բաղդա-
տաբար զուարթ կ'ըլլան արդէն, եթէ նոյն
խկ օդը ջանայ հակադդել իր անձրեւներու
կամ մշուշներու համասփիւռ տխրութիւննե-
րով: Ամէն ոք վեց օրուան աշխատութենէ
յետոյ ինքզինքին իրաւունք կուտայ, նոյն
խկ պարտք կը դնէ ուրախ ըլլալ սիրտով:
Բայց եթէ ապրուստի հոգերը՝ որոնք խորունկ
արմատներով ըսին են զրաւ սիրտներուն մէջ,
վանին զուարթ արմատներով իւրենները, ասոր
հակադդող դեղը գիտէ գեղացի նոյն իսկ
ասանքնինգ տարեկան պատանին: Գինեռուն-
ներու մէջ կը ծախեն դայն: Հոն են հալա-
գործները, գործաւորները, արհեստաւորները,
անոնց միջեւ՝ գեղի վաճառականը, վար-
ժապետը եւ ուսումնականը: Ան հասարակ
կը խմեն:

Ատոնց մէջէն պակաս կրնա՞ր ըլլալ Սէօ-
րիւբ^(*) որուն չուրջ ամէն բան զինքը խմելու

(*) Սէօրիւբ կամ Սէօրիւբէ կը հնչեն հոս Սերովբէն:

կը մէջէր: Անիկա ալքոլի պատճառած ընդար-
մացումին մէջ պիտի պատրուակէր դանկը
սփոփանքը բարոյական անտանելի վիճակի
մը՝ որուն մատնուած էր ամիսէ մը ի վեր:

Մնաց որ, այսօր երեսուն տարեկան՝ չէր
յիշէր որ տասնընինգ տարիէ ի վեր իրիկուն
մը պատրուակ չունենար խմելու իր սիրական
ըմբելիէն՝ որ զինքն անզգալաբար կը թու-
նաւորէր, ճարպոտ՝ ուսուցիկ մարմին մը տա-
լով իրեն, մարմին մը որ նստական արհես-
տաւորի կեանքին մէջ բուծուած՝ իսկած էր:

Բայց մէկ քանի իրիկուններէ ի վեր սկսած
էր սովորական չափն անցնել: Բան մը որ
չէր կրնար ընկճել իր օղիով կշտացած մար-
մինը, բայց կուտար իրեն գրգռուած վիճակ
մը՝ որ զինքը գրեթէ վտանգաւոր կը դար-
ձընէր ամէնուն հանդէպ:

Գուցէ այդ էր պատճառը որ այդ իրի-
կունը անկիւն մը մինակ մնացած՝ կը խմէր
անտարբեր՝ երեք ժամէ ի վեր: Արիւնտ ու
ճարպոտ քառանկիւնաձեւ դէմքը՝ դեռ նոր
ածիլուած՝ իր թուխ գոյնին վրայ ունէր
չթոթուած բնածափոշիի պիտակ ճերմակու-
թիւն մը՝ որ մազի արմատներու կապոյտին
խառնուած՝ գոյնի չեղաւորած հակադրութիւն
մը առաջ կը բերէր հոն: Հաստ ու խոնաւ
չրթունքներուն վերեւ սեւ պիւրերն իրենց
ոսկորական՝ բերանը փակադոյլ ձեւը թողած՝
հպարտօրէն վեր էին ցցուած: Աչքերը քիչ
մը թաւ յօնքերու ստուերին մէջէն կը ցո-
լացնէին վայրագ նայուածք մը՝ որ պիտի
զարմացնէր զինքը դինով չեղած ատեն ճանչ-
ցող մը, վաթնդի անշուշտ պիտի սիրած ըլլար
երկար արտեւանունքներու մէջէն մերթ ման-
կական միամտութեամբ ու իգական գգուան-
քով փայլող այդ նայուածքը: Հիմայ դէմքին
արտայայտութիւնը բոլորովին փոխուած էր.
ապուշի տգեղ ու կոր կնճիռներ կ'անշարժա-
նային մերթ հոն, մերթ ջլաճգական անզգալի
պրկումներով կը ցնցուէր, կնճիռներու կո-
րութիւնները կը տուրնային, ակռաները
սեղմած՝ թուչերուն վրայ ուռեցքներ կը գո-
յանային: Ու ասոնք բոլորը կը մատնէին
կատաղութեան կրակ մը՝ զոր չեմ գիտեր թէ
խամած օդին կը մարէ՞ր թէ կը բորբոքէր:
Սարսափի տարօրինակ նախազգացում մը պի-

տի ունենալ մարդ՝ այդ անկիւնը քաշուած տեսնելով այս աղան որ ջուրի պէս կը խմէր օդին հետզհետէ դրդուող վայրագ ակորթակով մը :

Ուշ տակն երբ գինեառունէն դուրս ելաւ , իմացաւ թէ շատ էր խմած այդ իրիկունը , վառնալի զգաց թէ՛ թէեւ օտքերը զինքը կըրնային կրկն գեռ , բայց փորձը կը ցուցնէր որ լեղուն դժուար կը ճկէր բերնին մէջ՝ խօսքեր տրտաբերելու համար :

Գինեառուններու մարդաշատ հրապարակէն սնցաւ , մէկ քանիննէր արմկելով՝ առանց անոնց բողբոջի բացազանչութիւնները լսելու . քիչ յետոյ ինքզինքը մուծ փողոցին մէջ գտաւ : Հոն մարդ չկար գրեթէ , բացի մէկ քանի ուշ մնացած գինովներէ որոնք սայթաքելով կը ջնաւային առաջանալ : Այստեղ ինքն ալ աղաւ էր արմկելու բոլոր խողնու դուռ հանդիսացող պատի անկիւնները՝ երկու կողմի վրայ . անոնք՝ հին բարեկամներու պէս՝ չէին բողբոջեր :

Իր սայթաքող ու պատի պատ գնացքով վերջապէս հասաւ իրենց դռն առջև : Խուստ հառաչանք մը հանեց կոկորդէն , հառաչանք մը՝ որ վայրագ ակորթութեան մը արտայայտութիւններու զժաղզուցութեան մը նախազգացումը կը բացատրէր կարծես : Յետոյ դուռը բացած առնն՝ անհոգութիւն ցուցնել ջանացող լերգծածաղ մը գէմքին վրայ , սկսաւ փողոցային լկտի երգ մը երգել այնպիսի՝ չեղաով ու միջարկութիւններով՝ որ հեռունէն լսող մը հրդեհի օգնութեան աղաղակի մը հետ պիտի չփոխէր զայն :

Ամիս մը կար որ ծնունդ առած էր այս վիճակը : Սէօրիւր կարգուիլ կ'ուզէր սիրուն գեղջուկ աղջկան մը հետ՝ որուն տուած էր իր սիրտը : Մայրը կը հակառակէր այս ամուսնութեան՝ վառնալի այդ աղջկան մօր ու իր միջեւ հին ու անձայն տառապանքներ մը ծնունդ առած էր ժամանակին՝ կնոջական փղուռ բամբասանքի մը հետեւանքով : Սէօրիւր այս ընդդիմութեան պատճառը նոյնիսկ չէր մտաբերած վնասել , այլ կուտած էր յաճախ մօրը հետ : Բայց մայրը վերջերս համոզուած թէ չպիտի յաջողի տղան իր մտադրութենէն կտ կեցնել , ճարահատ սրտեր էր

զինքը տունէն վռնակու ապառնալիքով արհիւլ անար ամուսնութիւնը :

Թող որ այդպիսի պարագաներու ալ պէտք կար արդէն , որպէս զի մայր ու աղայ իրենքին :

Խեղճ կինը ունեցած էր էրիկ մը նոյն քան վայրագորէն զինով , որքան էր աղան՝ որ ժառանգականօրէն ալքովամոլ , ինքն ալ կը գերազանցէր իր հայրը , երբ տարիներու առանց խաղաղութեան կեանքը շատ չար դարձուցած էր զինքը : Ու էրիկը կողմէ գործադրուած ընկճումի համակերպութեան՝ անոր մահէն յետոյ՝ յաջորդէր էր արիի ինքնաբաւ կեանքի մը ընդվզող ջգայնութիւն մը՝ որ մանաւանդ իր զաւկին հանգչի կը դրդուէր , իր յաջորդն այն մարդուն որմէ կրած տառապանքներուն կրկնութեան չպիտի հանդուրժէր լնաւ : Արդէն փոխանցել հիւանդութեան մը պէս էրիկէն ժառանգէր հակառակութեան ոգի մը , կոխի անկմը որ ամէն վայրկեան պատրաստ էր յայտնուելու :

Այն միջոցին երբ տղան ներս մտաւ , գեանայարկ սնեակին մէկ անկիւնը նստած էր ան՝ կնճռոտած զէմքին տուած չափազանց զգոհ արտայայտութիւն մը՝ զոր Սէօրիւր թէեւ առաջին ակնարկով նշմարեց , բայց ան տարբեր շարունակելով իր փողոցային ակրթը՝ ցած խոտէ բազմոցին վրայ նեղեց իր լիկած մարմինը , ու զրոյանէն հանդիմանալուց լեցնել տուած օդի շիւղ՝ բերնին տառաւ կուշա ումպերով կլկց բովանդակութեան մէկ մասը :

«Զի՛քիմ խմես , բացադանչեց մայրը անհան սպառնալից ձայնով մը , մեխանք խմածդ չօգտեօք» : Եւ զըլուխը յայնապէս տաքցած կղակի տակէն քակեց լաջակի հանգոյցը :

Սէօրիւր՝ որ շիւղ բերնէն վար էր անք մայրը մտիկ ընելու համար , «Սուրբի՛կ» մը մնչեց եւ ախ մը հանելէ յետոյ վերադարձանկեց շիւղ :

— Վրան փեթաւ իս ջլդիկ շանը , աղաղ մը ըլլար նէ սրի՞ հոգ . . . պիւրի՛կ արին թէ՛ արին քեզի . . . , պոռաց մայրը , վրան ծեծ կուխ : Անիկա պըստանես տէ՛ իմ տունս բն :

րես հէ՛, ատ էտէսլիդին տիջիլը : Զէ՛, չեմ
ուզեր, հէ՛մ հիմակուընէ դէզը չիկայ, դուն
ա՛ր դուս էլիր տնէս :

— Առնի՛մ պըտը, քեզ ար տա տունէն
պըտը վոնտիմ, ընդմիջեց Սէօրիւր զսպուած
ձայնով մը՝ հատիկ հատիկ արտաբերել ջա-
նալով բառերը՝ որոնք աղաւաղ դուրս կու-
գային իր զինովի ծանր լեզուի ծայրէն :

— Ի՛մ է տունը, չարունակեց մայրը, տու-
նի իմ է, հասկցա՛ր, նստած խանութի ար-
իմ է, առջնն ար ձառքէտ պըտ՝առնիմ, Բեզ
սօխտին օրթման ձգիմ օր՝ աշխարքի իմա-
նաս, հասկնաս օր մարըդ վո՛ւվ է էզեր, դնա՛
ան չուներուն տունը նայի՛ք, ձառքդ պօշ
ըլլայ նէ քեզ կուզե՛ն մի :

— Սո՛ւս կեցի քա՛, մռնչեց Սէօրիւր, հի-
մայ քովդ պըտը դամ :

Ապառնալից արիւնտա աչքերը բացուած
էին խոլոր մօլոր նայուածքով, ձեռքի մէկն
անհամբեր վրա էր բարձրացուցած :

— Տեղդ խելօք նստէ՛, գետի՛նը մննելիք,
իմ վրաս կը հրքտկաս (2), ինծի ձառք վեր-
ցնելու կելլաս հէ՛, դո՛ւս էլիր տնէս, չե՛մ
ուզեր, չե՛մ ուզեր : Վաստկածդ ըրախիի
կուտաս, ատ ջլղիկներուն կը կրես . . . ա՛լ
ղաւակ չունիմ, դո՛ւս, դո՛ւս :

Սէօրիւր պատասխանել ուզեց, բայց խռ-
պոտ ձայնիւր ելան կսկորդէն : Սաստկօրէն
բարկացած՝ կը սարսուտ, կրակ կտրած դէմ-
քին վրայէն պաղ քրտինքի այրող կաթիլներ
կը սահէին, յանկարծ ճահճատենդի նոպայէ
մը բռնուելու էր կարծես : Ինքիւրմէն ելած էր
ա՛լ, լանի մը չէր կրնար՝ խորհիլ, լեզուն
կապուած էր ու շիշի պարունակութեան
մնացորդը՝ զոր քամեց մէկ շունչէն, չկրցաւ
թրջել իր չոր քիմքը որուն կը փակչէր հրա-
տոշոր լեզուն :

— Գինո՛ւվ չուն, կը շարունակէր մայրը՝
իր առնական շեշտ ձայնով հետզհետէ արագ
ու տենդոտ արտաբերելով բառերը, դուս
էլիր տնէս, չե՛մ ուզեր, դո՛ւս դո՛ւս . . . :

Այն ատեն Սէօրիւր առիւծի մռնչիւն մը
հանեց կուրծքէն, ցատկեց տեղէն՝ խոյացաւ
մօրը վրայ՝ զգեստեց զայն ու իր ծանր կռուի-

(2) Հրքտկալ (մէկուն վրայ) = Ծեծելու սպառնական
շարժում մը ընել :

ները իջեցնել սկսաւ անոր կոր քամակին
վրայ :

Պատուը պոռաց լեզապատառ, յետոյ ընկ-
նումս՝ հաղիւ կրցաւ ըսել լալաղին ձայնով
մը. «Մարըդ եմ, Սէօրի՛րէ, կ'անըծի՛մ քեզ» :
Սէօրիւր սխալեցաւ : Զղջումի լքումն ան-
միջականօրէն յաջորդեց իր մէջ, սակայն կա-
տաղութեան թափը կը սարսուտցնէր դեռ
զինքը :

Այն ատեն պառաւը բացաւ իր ոսկրուտ
բաղուկներն ու սկսաւ անիծել. «Սուրպ Աս-
ւածամա՛ր . . . հէ՛մէն կռնծի՛ն ատ ձեռքերդ
. . . զաւա՛կս, ատ ջլղիկին համար մարըդ
ծեծեցիր, Ասւած խամէթ չանէ անիկա առ-
նելու . . . » :

Սէօրիւր անդիի սենեակը փախաւ, կար-
ծես սքողելու համար իր տկարութիւնը՝ զոր
չէր ուզեր ցուցադրել բնաւ, Հոն մօտիկ ընե-
լով հանդերձ մօրը անէծքները՝ որոնք հետըզ-
հետէ ընկճող սաստկութեամբ մը կուգային
իր խղճահարութիւնը աւելցնել, սկսաւ դի-
նովի անյաղ ախորժակով մը լափել ինչ որ
գտաւ հացի պահարանին մէջ, Յետոյ, քիչ
անդին՝ բազմոցի մը վրայ ինկաւ :

Մայրը առկաւ դպրեցող անէծքները :

Գիշերային աղօթքներուն սկսաւ, պառ-
կելէ առաջ : Պահ մը առաջուան վիճակին՝
հակադիր հանդարտութիւն մը յաջորդեւ էր .
աղօթքի սխալմանը դուցէ : Իւրաքանչիւր
հանդարտ ու սրտովին երկիրպագութենէ
վերջ՝ կարծես սիրտին վրայ ճնշող ծանրու-
թենէն բաւական թողած՝ կը կանգնէր իր կոր
հասակով, դէմքը դարձուցած երդիքին՝ որ
սեւցած՝ զիրար խաչաձեւող կոշտ առաջմե-
րու վրայ ձերի կոր թիկունքով մը կը պառ-
կէր : Աչքերը սակայն պիչ հայեցողութեան
մը անքրթիթ արձանացումին մէջ՝ կարծես
յափշտակուած էին յայտնատեսութեամբն այն
սուրբաբուն՝ որոնց կ'ուզէր իր խօսքերը հա-
տիկ հատիկ՝ շեշտաւոր ու հառաչող մըր-
մունջով մը :

Աստուածամա՛ր, օսկի՛ կամար,
Ծունկ եմ բոքեր քեզի համար .
Իմ չար միաքուկս ինծի մոռցո՛ւ,
Բարի միաքուկդ ինծի գիտցո՛ւ,
Տա զբախտիդ դուռը ցուցո՛ւ . . . :

Աղօթքներու երկար շարքի վերջաբանին

մօտ անվտանգ գիշեր մը անցընելու կանխա-
վատահօթեամբ կարտասանէր .

Սուրբ խաչը բերնիս,
Խաչը գաւազանը բարձիս,
Սուրպ խակեր (սկիհ) սրտիս,
Աստուածամա՛ր պահե՛ գինս :

Աչքերը չփակած՝ սատանային ալ ուղղեց :
Երկնուց արեւը, ծովուն աւազը աղուէ ժողուէ՝ քովս բեր :
Յետոյ երկա՛ր տապալակեցաւ անկողինին
մէջ :

* * *

Առաւօտան զէմի իր թռչունի քունն ընդ-
հատուեցաւ ժամկոչի « . . . Եկա՛յք ի սուրպ
էկեղեցի » կոչէն՝ զոր լսելուն պէս ոտքի ելաւ,
անկողինը անկիւն մը թիւմեց : Ուրիշ ո՛չ մէկ
տնական դործով պարագեցաւ ու պարաս-
տուեցաւ եկեղեցի երթալու : Անցած ատենը
գնաց ականջ դրաւ միւս սենեակի դրան՝ ուր
կը քնանար որդին :

Ջայն չկար գիտ : « Գինով մարդը ժամկո-
ցին կ'արթննա՛յ » խորհեցաւ գլուխը տիրու-
թեամբ շարժելով ու դուրս ելաւ տունէն՝
սեւ շալին մէջ պարփակած իր կնճռոտած
դէմքին ցաւոտ արտայայտութիւնը՝ զոր կար-
ծես չուզելով մէկին ցոյց տալ , թիկունքն ու
գլուխը սովորականէն աւելի զէպի գետին
հակած կը քալէր՝ առանց տճապարանքի ,
իւրաքանչիւր քայլը կշռելով ու կարծես կո-
խելիք տեղին վրայ վստահութիւն գոյացնելէ
յետոյ՝ միայն փոխելով ոտքը :

Երբ եկեղեցի հասնելով՝ սովորութեան հա-
կառակ՝ սաճարի միջին գուռէն ներս մտաւ ,
բեմին վրայ էր լուսարարը պատուած գոյնդ-
դոյն շապիկ մը հագած ու կարեւոր պաշտօնի
մը գործադրութեան գիտակցութեամբ հպարտ
ղիւքով մը կանթեղներ վառելով զբաղած էր :
Ճաղատ գլուխը սեւ ու անմոռ ֆէս մը
դրած տէրտէրին մէկը, դասէն , նախորդ
կիրակիի արարողութեան միջոցին տեղի ու-
նեցած մանրադէպի մը մանրամասնութիւն-
ները կը պատմէր լուսարարին :

Խորանը կէս մթութեան մը մէջ անշուք՝
բայց պատկառանք ազդող, զարդարանք մը
ունէր : Յատակի մութ պատկերի շրջանակին
երկու եզերքէն մարած մոմերով կէս երկու-
տանեակ շաշանակներ կ'առտիճանաւորուէին,

պարփակելով մէկ քանի փայլուն խալի-
որոնք չես զիտեր ուրկէ՛ կը ցոլացնէին տա-
րամ լոյսեր : Հրաշալի՞, ինքնածի՞ն արդեօք

Մերթ տիրող միջանկեալ լռութիւններու
միջոցին՝ խորհրդաւոր շշուկ մը կը պտուտէր
տաճարի արձագանգող պարունակութեան մէջ :
Միմունջը , պիտի ըսէի, իրենց պատկերի կող-
շրջանակներուն մէջ անշարժացած սուրբերուն

Խնէզ դպիր մը՝ որ փութացած էր կիկ-
ղեցի , կը վազվաւէր , դուրս կ'իլլէր պառ-
տան սենեակներէն , վար դասերը կ'աճապո-
րէր , գիրքեր կը խառնէր , մոմեր կը քն-
կէր պէտք եղած ու չեղած տեղերը , փողոց
ողու զուարթ ժպիտ մը դէմքին վրայ , բայ-
մերթ կը սաստուէր քահանայէն զոր կը ջա-
նար քանի տեղ չգնել : Անդարդ ջանք կէ-
մթութեան մէջ կը կախուէին գոյնդդոյն տա-
պաստակներու վերեւ՝ որոնք հաւատացեալ-
ներու բացակայութիւնը կը չեշտէին : Իրենց
պրիսմակները ցոլացիկ շարժումներ կ'առնէին
աննշան շունչէ մը՝ որ խորհրդաւոր անկիւն-
ներէ կը բզկէր :

Հսկայ ճերմակ սիւներուն վրայ կախուած
պատկերներ՝ իրենց քողերու բացուած քն-
հաւատացեալներու մոմերուն սպասարկուեալ-
ուածքներ կը պտտցնէին կարծես զէպի լոյս
դուռը :

Պառաւր այս բոլորին ուշադրութիւն դա-
ձնելու արամադրութիւն չունէր : Տանգի
ներքին դրան երկու քովերու պատկերներուն
մօտեցաւ հետզհետէ , ծանր ծանր խալի-
քելով անոնց շրջանակներուն մէկ մէկ հա-
բայր գետեղեց : « Սուրբ Թորոսո՛ւմ » ըսաւ
մէկին « զօրութեանդ մեռնիմ , դո՛ւն օղոր-
մի՛նք » : Աւելորդ բացատրութեան պէտք չկար
Մայրական անուշ ու զթոտ աչքերով Տիւր-
մօր ալ մէկ քանի ընտանի փափստքներով
լացաւ իր ցաւը : Յետոյ ներս մտաւ :

Նախորդ օրը Ս. Սարգիսի տօնն էր , նոյն
օրը դրամ չունէր անսր պատկերին առջեւ մոմ
վառելու համար : Այսօր պիտի կրնար իր օղ-
պարտաւորութիւնը կատարել իր մասնաւոր
ուխտին հետ :

Սուրբին հինցած իւզաների պատկերը բնա-
կանին կէս մեծութեամբ՝ կախուած էր պա-
տէն : Սուրբը հեծած էր հիանալի ձիւն մը

վրայ՝ որ գեղի տղամարդոց նախանձը կը շար-
վէր շատ անգամ . ճերմակ յովառակ մըն էր
ան՝ որ արորջը երասանակներով ընկելք ան-
նչան մէկ հրամանին վրայ՝ կարծես դուրս
պիտի ցատկէր շրջանակէն ու արագաշարժու-
թեան հրաշալի աղացոյց մը պիտի տար
նորէն : Բայց Սուրբը յաւիտենապէս զսպած
է անոր սանձակոծ՝ փրփրերախ պուխը՝ ու
ինքն ալ մոռցած ձիւ գաւակին վրայ պըտ-
նուող աղջիկը ու իր երբեմնի քաջութիւն-
ներու համբաւը շինող արարքները , բարե-
հաճած է դառնալ բարի Սուրբ մը՝ որուն մա-
քուր ու անկեղծ սիրտով դիմողը «ինչորքին
կատարում» կը գտնէ երբեմն :

Խեղճ կիներ՝ որ դուրսի մշտավառ ցած
կանթեղէն վառած էր զնաձ յարդի շեղի պէս
վախտ մումը , արցունքոտ աչքերը սեւ շալի
եղերքներով ծածկելու համար , գլուխը գե-
տին հակած , մոտեցած էր պատկերին ու
փակցուցած զայն մոմակալ երկաթին վրայ՝
ուր նախորդ օրուան կիսավառ մոմերն իրենց
ածխացած ծայրերը ցոյց կուտային : Սուրբի
պատկերին մանրամասնութիւնները խոյս կու-
տային իր անտղութեանէն՝ երբ բազուկները
կիսովին բացած վահերոտ նայուածք մը փոր-
ձեց վեր առնել : Միայն չէր կրնար ջնջմարել
անոր նեղարած՝ տաղնապոտ նայուածքը որ
կարծես պիտակից յանդիմանութիւն մըն էր
իրեն ուղղուած , ինչպէս նաեւ հրավառ նայ-
ուածքը նիփոյին՝ որ իր վեր լարձրացուցած
առջևի սմբակով կարծես կը սպառնար ջախ-
ջախել խեղճ պառաւին գլուխը : Անի վերջին
ջանք մըն ալ ըրտւ համարձակ նայուածք մը
ուղղելու Սուրբին ու «Անուշիկ Ս. Սէրգիս»
ըսաւ՝ չմոռնալով համարյա մը գետեղել պատ-
կերի եղերքին , «դո՛ւն աղիս սիրտին դառճ
տուր , զօրացդ մեռնիմ Սո՛ւրբ Սէրգիս» . ու
յիկեց նախորդ գիշերուան ծեծի տեսարանը ,
աղուն վայրագ դէմքը , իր անէծքները : «Գէշ
չեմ կամենար , դաւակա է» շարունակեց ար-
ցունքը սրբելով , «Ի՞նչ ըսիմ , դո՛ւն պիտես ,
դո՛ւն , դո՛ւն . . . » :

«Օրհնեալ Տէր մեր . . . » կը սկսէր գեղի
տէրտէրը խաղառ ձայնով մը՝ որ արձագանդ
կուտար կամարէն վար ու պատէ պատ : Բա-

նի մը ձերեր եկած էին եւ երկիւղած փա-
րուսով կը համբուրէին տաճարի գետնները :
Պահարան սենեակներէն բարձրաձայն խօսակ-
ցութիւններ կը լսուէին : Վերնատունէն ալ
կիներու փոփսուքներ ծայր էին տուեր :

Պառաւը գնաց գտաւ Ս. Մովկիմայ քա-
հանային պատկերն ալ : Անոր ալ խօսեցաւ
մանրամօրէն եւ գարնան ուխտագնացութիւն
մը խօստացաւ անոր սուրբ ակին եւ ազուոր
սեւ աշուի գառնուկ մը իրր մատաղ՝ կթէ
հաճէր ան «դառճ տալ» իր Սէօրիւբի սիրտին :

Բայց դանդաղելու ժամանակ չէր . գո-
ւիթը քաշուեցաւ անկիւն մը , հոն երկա՛ր
ազօթեց ինքնամփոփ՝ երբեմն սակայն չկրնա-
լով ինքզինքն արգիլել ականջ դնելու այն
բամբասանքներուն զորս կընէին շուրջը զըտ-
նուող կիներ :

Արշալուսային գունագեղ ճառագայթներ
սպրդած բարձր պատուհաններէ՝ կուգան տար-
բաղապարուիլ ջահերու պրիսմակներէն : Հա-
ւատացեալներու սովորական փոքրաթիւ խում-
բը հաւաքուած է՝ Մերերը՝ գլուխնին միշտ
ծածկուած՝ ծաղապատիկ՝ երկուք ծաղուած
անդադար համրիչ կը քաշեն , ցուցամու հաղ-
ուպիւտ երկիւղածներ՝ լայնօրէն բաղկատա-
րած՝ պաղատական նայուածքով ազօթքի սա-
ւառնումներու մէջ վերացած են :

Մինչ առաւօտեան երկնաշունչ երգերը ,
շարականները կը քաշքշուին բերնէ բերան ,
ազօթքները արտունջի մարտնչներու հետ
չիօթուելու չափ անորոշ կ'արտասանուին :
Յետոյ պատարագը կը սկսին՝ թաւաղչոր ըն-
թացք մը տալով բոլոր արարողութիւններուն
Միայն պատարագիչ քահանան երբեմն կը
չեչաէ խորհուրդին սրբութիւնը , երբ իր յա-
փշտակուած դէմքով կ'արտասանէ խորհրդա-
ւոր օրհնութիւնները՝ սթափեցնելով զամէնքը .
իր կարգին սակայն ինքն ալ սթափած՝ չմոռ-
նալով մերթ ախնոցի վրայէն դժգոհ նայուածք
մը պտտցնելու հաւատացեալներու ցանցա-
ռութեան վրայ :

Դասի տէրապանները աւելի՛ յաճախ խու-
ղարկու եւ դժգոհ նայուածքներ կ'ուղղեն
դէպի ետ : Տաճարը յուսահատեցուցիչ կեր-
պով պարապ կը մնայ . առանց դրամի օր մըն
ալ պիտի անցնի : Միեւնոյն ձերերն եւ ու-

րիչ մէկ քանիներ են հոն միշտ : Դէպի դա-
ռիթն ու վերնատունը նայուածք մըն ալ մի-
եւեռնոյն յուսահատեցուցիչ եզրակացութեան
կ'առաջնորդէ իրենց առուտուրէն դժգոհ տէր-
տէրները : Բանի մը սեւ ստուերներ կ'երևո-
արկան հոն ալ : Օ՛հ , այն երբեմնի երկիւղած
«օրհնեալ մարիկ խաթուհներ»ը գոնէ ա՛լ որ-
քա՛ն սակաւաթիւ են այսօր :

Բայց աճապարել հարկ է . տէրտէրները
գոսէ դաս տուի՜ր պատգնելու ժամանակը
կ'ազդարարեն իրարու ծանօթ նշմարներով ,
եւ ահա անծուխ բուրվառի մը բոժոժներուն
ազդարարող ձայնը կըսկսի երթեւեկել եկե-
ղեցիին մէջ : «Յիշեա՛լ լի՛լիք . . . » զո՛ւք՝ որ
երեք փարանոցի պղինձէ սեւ կլորակը կը
սահեցնէք արծաթէ տուփին մէջ , բոլոր սըր-
բութիւններուն զէմ մեղանչող պաղ ձայնով
մը . իսկ անո՞նք որ տուփի չարաչոք պտոյտը
գուշակածնուն պէս՝ աղօթք աղաչանք կէս
թողած գէպի դուրս կ'աճապարեն . . . : Է՛հ
մի՛ հարցնէք , աստանկ բաներով զբաղելու
ժամանակ չէ , պէտք է կանխել այս փախուս-
տի բոլոր արամազբութիւնները , սուփը իւրա-
քանչիւր հաւատացեալի քիթին՝ մօտեցնել :
«Յիշեա՛լ լի՛լիք . . . » եթէ լուսայ մը՝ ձգէք
արծաթ տուփի պարպալ փորին մէջ՝ որ կը
լննայ ու կը պարպուի՝ անկուշտ անսուաղու-
թիւնը ցոյց տալով միշտ ամէնուն , մինչ կը
պարարտանայ , միտով՝ ճարպով՝ կ'ուռննայ
տէրտէրին ամբարձիկ փորը : Անիկա չեղ
նայուածքով մը ձեռքերու շարժումներուն
ուշադիր՝ անտարբեր ձեւացած կը դանդաղի
նոյն իսկ անանց առջեւ որոնք երկարատեւ
երկիրպագութենէ մը չեն ուղեր վեր բարձ-
րանալ :

Արհեստին մէջ հինցած տէրտէրը ոչ մէկ
անկիւն կը մտնայ : Գաւիթն ու վերնատունը
կ'երթայ կիներուն մէջ՝ իր հովհարող քղանցք-
ներով պարուրելով ճամբուն վրայ գանուղ-
ները : Երկու «Յիշեալ լի՛լիք»ի՝ մէջ տախտի
սրախօսութիւն մը կը փախցնէ , պատաս-
խանն ընդունելով յաճախ :

Բայց բնաւ չի փախցնի իր ակնոցի պղզ-
տորութեան մէջէն ամէնէն աննշան , ջնջուած
անձ մը իսկ՝ որ ո՛ր եւ է անկիւն մը գոնէ ա-
ղօթքի վերացումի մը մէջ կը ջանայ ծած-

կուիլ , խուսափիլ , աներեւոյթ ըլլալ տէ-
րտէրի աչքերէն :

Մինչ վարը դպիր ու դպրատկա իրենց
աճապարանքը պարտադիր կընեն ամէնուն :
Ու շատ չանցած ծայր կը հանեն պատարադ
արարողութիւնը , դժուարակիր աշխատութեան
մը ծանրութենէն աղատելու փութկոտու-
թեամբ :

Սէօրիւրի մայրը՝ երբ «օրհնեալք եղե-
րուք»ը լսեց , շարժեցաւ իր անկիւնէն , գնաց
պատարապիչ քահանային աջն ու Աւետա-
րանը համբուրեց :

Ետ դարձած ասան վերստին հանդիպեա-
լի «անուշիկ Ս. Սէրգիս»ին , նորէն արցունքի
երկու շիթ սրեց աչքերէն : Եկեղեցիէն ելլ
դուրս կ'ելլէր , բաւական թիթեցած զքոյ
ինքզինքը , վառն զի կարծես բոլոր սուրբնէն
բարի արամազբութիւններ գուշակել էր :
Այո՛ , կը սկսէր միտմտ հաւատքն ունենալ ին-
որդին տիտի զզջար զինքը ձեռած ըլլալուն
համար ու այդ զէպքը պատճառ տիտի ըլլալ
որ բոլորովին փոխէր իր ընթացքը , մտնալ
իր ատած կնիւան ազջիկն ու պար իր մայրա-
կան խանդաղատանքին մէջ վնասէր ճշմարիտ
սէրը : Անկէ վերջ ինքն էր որ տիտի գանձը
անոր կնութեան համար տնարար գեղեցիկ
ազջիկ մը՝ որուն նախ ի՛նք հաւնելու էր :
Յետո՞յ . . . , բայց ո՛չ քանի՛՝ որ սենէր ապրե-
լու , ոտքին մէկը գերեզմանին մէջն էր ար-
դէն , ցաւ չպիտի գգար եթէ թոսնիկ մը չհա-
րուրած մեկնէր աշխարհէս :

Այս խորհրդածութիւնները մէկ քանի ան-
գամ ընդհատուեր էին մինչեւ տուն : «Օղորտի
Աստած»ներ բաժներ էր հանդիպած զրացու-
հիներուն , առանց խօսակցութիւն բանալու
արամազբութիւն ցուցնելու :

* * *

Երբ իր անակի՛ գուռէն ներս մտաւ , ան-
սաւ որ Սէօրիւրի ոտնամանները ցիւրին մէջ
լսկոնուած նետառուած էին դեռ հոս ու հոն :
Օրը բաւական առաջացած էր : «Աս ասան չի
արթնցեր» խորհեցաւ . կրակ վառեց , ապրիլ
ջուրը գրաւ տաքնալու , տնական ուրիշ աշ-
խատութիւններով բաւական ժամանակ ան-
ցաւ . որդին դեռ չէր արթննար : «Զօքի
էւելի խմեր էր» խորհեցաւ ինքնին ու ծայ-

նով «Սէօրիւբէ՛, էլի՛, կ'օգտէ՛ քընացար» ըսաւ նեղօրիտ, դրան երկու հարուած տալով ան-
ցած ասեմն : Բայց անի շա՛տ , շա՛տ խոր կը
քնանար դեռ , տեղէն չարժեկու : Ճայն մը իսկ
չէր լսուեր :

Քիչ յետոյ նեղօրիտ կնկան համբերու-
թիւնն ա՛լ հատաւ : Որդիին երեսը նայիլ
չլիտի ուղեր , մինչեւ որ չգար ոտքը չիյնար
ան , բայց չէր ալ կրնար հանդուրժել որ մին-
չեւ կէս օր քնացող մը գտնուէր իր տանը մէջ :
Յետոյ յուսալով ալ որ առիթը պիտի տար
ազուն ներողութիւն խնդրելու իրմէն — «Օրն
օրարած կ'էլաւ , աղա՛յ» ըսաւ դուռը բանա-
լով , ու ինքնին «Մեղա՛յ , գինով մարդը ի՛նչ
չառ կը քնանայ» :

Սերովրէ բաղմոցին վրայ պառկած էր
կանախի վրայ , լաթերը չէր հանած , գլուխին
տակը բարձ չկար : Կիսաբաց աչքերը երկար
արտեանունքներուն մէջէն պաղատող շատ
անուշ բայց նուաղկոտ նայուածք մը ուղղած
էին դէպի դուռը , դէպի մայրը՝ որ երկվայր-
կեան մը շունչը բռնած՝ կանգ առաւ հոն ,
խանդավառանքով խառն հպարտութիւն մը
զգաց մայրն ըլլալուն այդ տեղ տարածուած
երկատարիլն՝ որ կը կարծէր թէ այդ տեղած
մարմինը առողջութեամբ ու կեանքով լեցուն
էր , ու յախշտակուած այդ պաղատական ա-
նուշ նայուածքի հմայքէն՝ երկվայրկեանական
ներողութեան մը մէջ մոռցաւ ամէն բան :

Բայց երկտատարի մարմինին զիրքը շատ
անբնական էր՝ կէս մը բաղմոցին կէս մը
փաթկին վրայ , Ոտքերը թեթեւ մը կծկուած
էին , ձեռքերն ու մատները լուսնոտի ջղա-
ճրգական նոպայի մը գալարումը ունէին :
Անձկութեամբ մտեցաւ , ձեռքերը բռնեց
անոր . . . սառեր էին : «Սէօրիւբ , Սէօրիւբ»
կրկնեց անբեկ , ջանադով չարժեկ մարմինը
որ փայտ կտրած էր . Ճայն չէր տար տղան .
«Սէօրիւբ՛, դաւա՛կա . . . » : Մեռած էր : Այս
գիտակցութիւնը սարսափահար ըրաւ գինքն
ու սկսաւ լալ :

Նրբ դրացուհիներ հասան «Պապնձէր բե-
րան , դա՛ւակա , աէ քեզ չ'անըծէի» կը կրկ-
նէր , անընդհատ լալով ու պագնելով այն
ձեռքերը՝ որոնք կը կարծէր թէ իր անէծքին
հետեանքով այդպէս կռնծեր էին :

Քառորդ ժամէ մը բժիշկ հասցուցին :
Մայրն ըսաւ թէ սիրտի կաթուածը յանկար-
ծամահ ըրած էր Սէօրիւբը , հետեանք եր-
կարատեւ ալքոլամոլութեան , եւ թէ հաւա-
նաբար նախորդ գիշերուան բուռն յուզում-
ներն ու ստամոքսին տարադայման ծան-
րարեանումը նպաստած կրնային ըլլալ այս
վտանգներն :

Մայրը կրնա՞ր հաւատալ տառնոց , կորուս-
տի տհաճութեան առջեւ՝ պատճառն ինք
դարձած ըլլալու խղճահարութեամբ խելած՝
կը կրկնէր . «Մօր մը անէակը չ'ունէր կ'ըսին ,
ինչո՛ւ բռնեց իմինս , . . . պագնծէր բերանս ,
դաւա՛կա , աէ քեզ չ'անըծէի» :

Մտկարար , 7 Ապրիլ 1902

ՎԱՀԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՈՍԿԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ղուկաս Էֆ. Վարպետեանի յօդուածն ետքը , երկ-
րորդ յօդուած մըն ալ ստացանք , դարձեալ Իգմբեկն ,
Դեորդ Էֆ. Պուպիկ , որ կը նկարագրէ Ստեփան Ոս-
կանի դամբարանին առջև կապարուած հանդերը : Կը
քաղենք մեր աշխատակցին յօդուածին վերջին մասը ,
որ արժանաւոր չարգանք մը կը մատուցանէ ռդրացեալ
ճրտպարակագրին յիշատակին :

Ներելի միայն թող ըլլայ մեզ ըսել որ այս
հանդէսը թէեւ անագան՝ բայց դարձեալ Ստե-
փան Ոսկանի հանդէպ՝ մեր հասարակութեան
երախտադրական զգացմանց արտայայտու-
թիւնը , նուիրական պարտքի մը վճարումը
կրնայ նկատուիլ : Ազնիւ սիրտերու համար
այդ ալ սփոփիչ երեւոյթ մըն է :

Ստեփան Ոսկանի զրջէն ելած տապանա-
գիր մը տեսանք Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ
դերեզմանատան մէջ , բարեխիշատակ Տիկին
Նզիտարեթ Սպարթալեանի չիրմին վրայ :

Կայսնիս ետեւ

Ուր կ'երելի մուր ,

Կը տեսնեմ արեւ

Նւ ուղի անխուր :

Ունիմ յոյս սիրոյ հետք ,

Կը քողում ինձմէ ետք ,

Ձեմ վախճար այս փոսէ

Գուր արտուք կը հոսէ :

Յե՛սին կայան ե այս իմ .
Սարսուռ կու տայ մի՞տ շիրիմ
Այն սիրտերու որոնց քով
Յոյս չփայլիր հաւատքով :

Ստեփան Ոսկան այս տողերը տապանի մը ցուրտ մարմարիոնին յատկացուցած էր : Եւ թանաթները ինչ տարեկան մեռաւ , բայց իր մահակալին մէջ ալ մահուան մօտեցած օրերը իր ընդարձակ միաքը ընդ միշտ բաց էր ամէն գեղեցիկ գաղափարներու եւ սիրտը կը արօժիէր ազնիւ զգացումներով : Կը մեռնէր , մահուանէն վերջը անմահութեան արեւը եւ անխուժ ուղի մը տեսնելու անդրդուելի հաւատքով :

Բազմութիւնը որ ներկայ էր այս տխուր միանգամայն սրտառուչ հանդէսին , կարծես թէ այս հաւատքով համակուած էր եւ գերեզմանատունէն ելան դացին լաւագոյն զգացումներով քան թէ իրենց կեանք ժամանակը , տանելով իրենց հետ սիրտի յիշատակ մը մեռեալներու , այսինքն համեմատաբար երջանիկ մեռեալներու :

Գեղեցիկ հանդէս մըն էր ատիկա : Գեղեցիկ դամբարան մըն է կանգնուածը մեր մեծ բարեկամին յիշատակին , այլ ժամանակին հետ այդ մահարձաններն ալ թէեւ մարմարայ ըլլան՝ կ'անցնին , մինչդեռ Ստեփան Ոսկան իր անմահանալի գործովը երախտազէտ սիրտերու մէջ բարոյական յիշատակարաններ կանգնած է զորս նոյն իսկ ժամանակը յարգելու պարտաւոր է :

Գ. ՊՈՒՊԼԻ

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Պուլկարաց Ս. Էկզարքին 25ամեայ յարեւանին առթիւ , Ս. Պատրիարք Հայրը երեքշաբթի իրիկուն Օրթագիւղ երթալով , շնորհաւորական այցելութիւն տուաւ : Նոյն օրը , առաւօտուն , Պատրիարքարանի կողմէ պատգամաւորութիւն մը , որուն զլուսը կը գտնուէր Կրօն. Ժողովի առեմապետ Սրբազանը , Ֆէնէրի պուլկարական եկեղեցիին մէջ կատարուած արարողութեան ներկայ զատուեցաւ :

Կայս. գնահատում. — Գ. Կարգի Մէկ. արդէ պատուանշան շնորհուեցաւ : Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքին թարգման Տ. Սարգիս վրդ. Աճմեանի , Իւլայի Բ. աստիճան կառուած նախարարութեան թարգմանութեանց ու թղթակցութեանց գիւնդին երկրորդ միւլէյից Արմենակ Սաղըզ էֆ. , եւ Միւլթէմայիցի աստիճան՝ Վերաքննիչ Ասեմանի անդամ Յովհաննէս էֆ. Թորոսեանի :

Այլի Տիկին Նեկսար Աւան , քոր վեհ Մաքսուտ Սեպուհ պէյի , իր մահկանացի կնքեց չարթուս սկիւղը եւ յուղարկաւորութիւնը կատարուեցաւ չորեքշաբթի առաւօտ Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին , հանդիսաւորապէս : Հանգուցեալը ազնուական զորդատանի մը շառաւիղն էր եւ իր անձին վրայ կը կրէր բարեատոմիկ հին խաթուններու յուանիչները : Իր կէս դար առաջ , մէկը կը պէտէր այն կրթասէր արիւններէն որոնք քննեցին Օրթագիւղի Հոփիսիմեանց վարժարանը : Բարեյիշատակ Տիկին Էպրու Քարաքէտարի հետ խնամածու գտնուած էր նաեւ , ժամանակին , Ազգ. Հիւանդանոցին : Կը թողնէր կու գաւակ , Տիրան էֆ. Աշնան եւ արդի Տիկին Երանուհի Վ. Օրմանեան :

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

- Ա. Է. (Մազկեր). — Ստացանք 50 դրշի նամակներ զորոյմ Մասիսները կը դրկուին այսօր , մարտ 30 (բ. 13) քերթէն .
Կ. Կ. (Պակսում). — Ստացանք 50 դրշ. եւ արձանագրեցինք զձեզ բաժանորդ . Մասիսները կը դրկուին բ. 17է : Բաժանագրութիւնիդ կը հաշուենք մայիսի սկիզբէն .
Գ. Ե. (Սաւուն). — Զեր յանձնարարած նոր բաժանորդին (շ. Գ) Մասիսները սկսան դրկուիլ բ. 13է :
Տ. ՄԱՍՏՐԵՐ : ԳԷՆՅ. (Գահիրե). — Ներկայ քիւն կը սկսինք դրկուիլ Զեզի Մասիս , բաժանորդագրութիւնիդ հաշուելով մայիս 1է :

Թէ վերոյիշեալ չորս նոր բաժանորդներն երեքն է քէ անոնց որոնք կրնան ներկայանալ այսօրեան կը ծանուցանենք որ , երբ կը փափաքին Ներկեալ վերջի ամբողջութիւնը ունենալ , հաճին բացողապէս զոյգիլ բ. 13է (մարտ 30) սկսեալ Մասիս դրկուի իրենց , ժամանակ անցնելէ ետքը եղած յանձնարարութիւնները դժուար կըլլայ կատարել , հին քիւնքն տրամադրելով զտնուելուն պատճառով :

Արժանատի Կ. Ս. Իրիթիճեմն

Տպագրութիւն Գ. ՄԱՏՐԵՐԻ ՈՍՍԱՆ
Կ. Պոլիս , Ֆինճանըլար եօղուշու , Թիւ 27



ՃԵՅԼԱՆ

(ՌՌԻԲԷՆ ՄԱՂԱՔԵԱՆ)

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՀԱՆԴԵՐՁԵՂԻՆԱՑ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ
ԹԻՐ ԶՆԴՐԱՆ



Պոլիս, Սուլթան Համամի հրապարակին վրայ
Փինթո խանին դուրսը, թիւ 2



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է։

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

ՍԻՆԿԷՐ

մեքենան լաւագոյնն է։ սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հատաւորապէս եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գնէ։

Ձեռքի, ոտքի եւ ձեռքի ու ոտքի
միանգամայն մեկնեցանք
կը գտնուին։

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ։

ՔԵՐԱ, ՄԵԾ ԴԻՋԻՆ, Կալաթա Սէրայի Լիսէին դիմաց։

ԿԱԼԱԹԱ { 1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Դարաքէօյ, Թրամպէյլին կայարանին Դիմաց։

ՊՈԼԻՍ { 1. Սուլթան Համամ.
2. Սուլթան Պէյազիտ։

Դասերը եւ նորագոյնիւմք ձրի։

Կատարեալ երաժիշտութիւն

Մասնագիտօրէն գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ

ՄԱՍՏՈՒՆԻՆԻ
ՄԱՍՏՈՒՆԻՆԻ

Ա Ր Ի Ս Ե Ը

ՇՈԳԵՇԱՐԺ ԳՈՐԾԱՏՈՒՆ ՀՈՏԵՂԻՆԱՑ ԵՒ ՕՋԱՌԻ

Հիմնեալ 1889 ին



Կ. ՊՈԼԻՍ

ԹԱՀՏԱՔԱԼԷ



ՎՃԱՆՈՒՄ

Արուեստագիտական վերջին կատարելագործութեամբ եւ առաջնակարգ մեքենաներով օժտեալ եւ եւրոպացի վարպետի մը հսկողութեան ներքեւ կ'արտադրէ ամենալուրջ հոտեղէններ ինչպէս նաեւ թուալէթի հոտաւէտ եւ լուացքի պարզ օճառներ։ Տեսակի ազնուութեան մասին եւրոպական ամենամեծ գործարաններու տարահայ դէմ մրցելու առաւելութեան կը միայնէ գիներու գերազանց աժանութիւնը։ Փափաքողներուն՝ քաթալօկը ձրի կը զրկուի։

Մեծաքանակ գնում րնել ուզողները կրնան դիմել Կ. Պոլսոյ մէջ ՕՐՕՍՏԻ ՊԱԲԻ Կ. ԻՆՃԻՃԻՆԱՆ ՈՐԴԻԲ վաճառատունները, իսկ դաւառներու եւ օտար երկիրներու մէջ դիմել գործակալութեանց որ ի ստորեւ, ուր պիտի գտնեն նուոյններու ցուցադրութիւն մը պէտք եղած բոլոր անդեկութիւններով։

ԲԱՐԻՋ. — Պ. Լաքառիեռ Որդի եւ Ընկ. 28 Ռի Շաբուէօն։

ՊՈՄՊԱՅ. — Պ. Ապրար եւ Ընկ.

ԱՂԵՔԱՆԵՐԻԱ. — Պ. Մ. Դալֆանեան

ԳԱՀԻԲ. — Պ. Հ. Ռոզանբայ.

ՌՈՒՍՃՈՒԳ. — Պ. Պ. Կ. Ինճիճեան որդիք.

ՎԱՌՆԱ. — Պ. Կեռոն Արտիքի.

ԻՋՄԻՏ. — Պ. Յակոբ Մոմճեան

ՋՄԻԻՌՆԻԱ. — Պ. Հայերիս Վառնիկ.

ՍԵԼԱՆԻԿ. — Պ. Տիմո Ֆերնանտէզ.

ԻԻՍԿԻԿ. — Պ. Մ. Բախուան.

ՊԵՏՐՈՒԹ. — Պ. Յրանքի Շիֆֆեր.

ՍԱՄՍՈՆ. — Պ. Պ. Պետրոսեան եղբարք.

ՏՐԱՊԻՋՈՆ. — Պ. Արիս Կ. Ինճիճեան.

ՍԵՐԱՍՏԻԱ. — Պ. Պ. Վ. Ս. Մեմառուքեան

ՌՈՏՈՍՔՈ. — Պ. Յակոբ Բոսփառայ



ՌՕՍԻԱ — ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄԲ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիւններ

34,775,642 ֆրանք

Երաշխաւորութեան գումար

121,765,333

1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած

164,172,000

Կեդրոնացեալի, Ղալաթիոյ Բաշափիմ վրայ, Մախաւան հին տեղը

Ընդհ. Բնէի

Ընդհ. Դործակալ

Ա. ՀԻԻՐՄԻԻՋ

ԹԷՈՏՈՐ ՌԷՐԷՆ